

# ՄՊՈՆՏԱՆ ՆԵՐՈՒՂԵՂԱՅԻՆ ԱՐՅՈՒՆԱԶԵՂՄԱՆ ՎԱՐՄԱՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

## Ամփոփում

### Նպատակ

Այս ուղեցույցի նպատակն է տրամադրել ժամանակակից սպառիչ խորհրդատվություններ սպոնտան ներուղեղային արյունազեղման ախտորոշման և բուժման համար:

### Մեթոդներ

Սույն ուղեցույցը մշակվել էրևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի նյարդավիրաբուժության ամբիոնի կողմից: Փաստաթղթի հիմք է հանդիսացել Ամերիկյան Սրտի Ասոցիացիայի (ԱՍԱ) / Ամերիկյան Կաթվածի Ասոցիացիայի (ԱԿԱ) 2015 թ. հրապարակած «Սպոնտան ներուղեղային արյունազեղման վարման ուղեցույց»-ը ինչպես նաև MEDLINE, PubMed, Cochrane library և UpToDate շտեմարանների արդի տվյալները: Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս սկզբնաղբյուր հանդիսացող փաստաթղթում, հիմք է ընդունվել ԱՍԱ Կաթվածի խորհուրդի ապացույցների դասակարգումը: Ուղեցույցի տեղայնացման գործընթացը իրականացվել է համաձայն միջազգային ADAPTE մեթոդաբանության: Բոլոր խորհուրդները քննարկվել և հավանության են արժանացել ԵՊԲՀ նյարդավիրաբուժության ամբիոնի աշխատակիցների կողմից (արձանագրությունը կցվում է): Սույն փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 3 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց: Ուղեցույցը նախատեսված է նյարդավիրոբուժների, նյարդաբանների, ինտենսիվ թերապևտների, անհետաձգելի բուժօգնության աշխատակիցների և առողջապահության կազմակերպիչների համար:

### Արդյունքներ

Փաստերի վրա հիմնված ուղեցույցները նախատեսված են սպոնտան ներուղեղային արյունազեղումով հիվանդների վարման համար: Ուղեցույցում քննարկվում են ներածությունը, նախահիվանդանոցային վարումը, անհետաձգելի բուժօգնության բաժանմունքում վարումը, նեյրոնկարահանումը, դեղորայքային բուժումը, խորանիստ երակային թրոմբոզի կանխարգելումը, զարկերակային ճնշման կարգավորումը, ընդհանուր մոնիտորինգը և ինտենսիվ բուժումը, գլյուկոզի կարգավորումը, ջերմության կարգավորումը, ցնցումներ և հակացնցումային դեղորայքը, բարդությունների վարումը, ներգանգային ճնշման մոնիտորինգը և բուժումը, ներփորոքային արյունազեղումը, ՍՆԱ-ի վիրահատական բուժումը, կրկնակի արյունազեղման կանխարգելումը, վերականգնողական բուժումը: Ներառված են նոր 3-րդ փուլի հետազոտությունների արդյունքները:

## **Եզրակացություններ**

Սպոնտան ներուղեղային արյունազեղումները լուրջ բժշկական իրավիճակ է, որը պահանջում է վաղ, ագրեսիվ, մասնագիտացված բուժօգնություն: Ուղեցույցներն առաջարկում են հենք սպոնտան ներուղեղային արյունազեղումների վարման համար:

## ***Բանալի բառեր***

***ԱՍԱ գիտական հաշվեդրություններ***  ***զարկերակային ճնշում***  ***կոագուլոպաթիա***  ***ախտորոշում***   
***ներուղեղային արյունազեղում***  ***վիրահատություն***  ***բուժում***

## **Պատասխանատու համակարգող՝**

Ռ.Վ.Ֆանարջյան, բ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի նյարդավիրաբուժության ամբիոնի վարիչ

## **Աշխատանքային խմբի անդամներ՝**

Ս.Հ.Բադալյան, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի նյարդավիրաբուժության ամբիոնի ասիստենտ

Խաչատրյան Տ.Կ., բ.գ.թ., Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի նյարդավիրաբուժության ամբիոնի դասախոս

Հակոբյան Ա.Պ., բ.գ.դ., Նաիրի բժշկական կենտրոնի էնդոսկոպիկ նյարդավիրաբուժության և ողնաշարային վիրաբուժության կենտրոնի ղեկավար

Եղունյան Մ.Ա., բ.գ.դ., Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի նյարդավիրաբուժության ամբիոնի պրոֆեսոր

## **Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ**

Աշխատանքային խմբի անդամները չունեն որևէ շահերի բախում և ֆինանսավորման աղբյուր:

## **Շնորհակալական խոսք**

Պատասխանատու համակարգողը իր երախտագիտությունն է հայտնում աշխատանքային խմբի բոլոր անդամներին:

## **Բովանդակություն**

Նախաբան

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Նախահիվանդանոցային վարումը

Անհետաձգելի բուժօգնության բաժանմունքում վարումը

Նեյրոնկարահանում

Դեղորայքային բուժումը. Հեմոստագ, կոագուլոպաթիա, հակաագրեգանտներ,

խորանիստ երակային թրոմբոզի կանխարգելում

Զարկերակային ճնշման կարգավորում

Ընդհանուր մոնիտորինգը և ինտենսիվ բուժումը

Գլյուկոզի կարգավորումը

Զերմության կարգավորումը

Ցնցումներ և հակացնցումային դեղորայքը

Բարդությունների վարումը

Ներգանգային ճնշման մոնիտորինգը և բուժումը

Ներփորոքային արյունազեղում

ՍՆԱ-ի վիրահատական բուժումը

Կրկնակի արյունազեղման կանխարգելումը

Վերականգնողական բուժումը

Եզրակացություններ

Գրականության ցանկ

### **Հապավումներ**

ԱԿԱ՝ ամերիկյան կաթվածի ասոցիացիա

ԱԿԱԻՍ՝ Առողջության, կաթվածի ազգային ինստիտուտի սանդղակ

ԱՍԱ՝ ամերիկյան սրտի ասոցիացիա

ԱՅԱ՝ ախտորոշիչ ցերեբրալ անգիոգրաֆիա

ԳԵՍ՝ Գլազգոյի ելքի սանդղակ

ԳԿՍ՝ Գլազգոյի կոմայի սանդղակ

ԷԷԳ՝ էլեկտրոէնցեֆալոգրաֆիա

ԹՍՊ՝ թարմ սառեցված պլազմա

ԹՁԹԷ՝ թոքային զարկերակի թրոմբոէմբոլիա

ԽԵԹ՝ խորանիստ երակային թրոմբոզ

ԿՏ՝ կոմայուտերային տոմոգրաֆիա

ԿՏԱ՝ կոմայուտերային տոմոգրաֆիկ անգիոգրաֆիա

ՊԿԿ՝ պրոթրոմբինային կոմպլեքսի կոնցենտրատ

ՄՆՀ՝ միջազգային նորմավորված հարաբերություն

ՄՌԱ՝ մագնիսառեզոնանսային անգիոգրաֆիա

ՄՌՏ՝ մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա

ՆԳՃ՝ ներգանգային ճնշում

ՆՓԱ՝ ներփորոքային արյունազեղում

nVIIaԳ՝ ռեկոմբինանտ VIIa գործոն

ՄՆԱ՝ սպոնտան ներուղեղային արյունազեղում

ՎԿԱ՝ Վիտամին Կ-ի անտագոնիստ

ՈԻԳԻՇԱ՝ ութերորդ գործոնի ինհիբիտորի շրջանցող ակտիվություն

## **Նախաբան**

Սպոնտան, ոչ վնասվածքային ներուղեղային արյունազեղումը (ՄՆԱ) մահացության և հաշմանդամության լուրջ պատճառ է ամբողջ աշխարհում: Չնայած ավանդաբար ներուղեղային արյունազեղումները գտնվում են հետին պլանում իշեմիկ ինսուլտի և սուբարախնոիդալ արյունազեղման համեմատ ապացուցողական բժշկության տվյալների սակավության իմաստով, վերջին տարիները նշանավորվել են ՄՆԱ-ի հետազոտման ակտիվացմամբ: Մեծածավալ հետազոտությունները ցույց են տվել, որ պացիենտների մեծամասնությունը ներկայանում են փոքր ներուղեղային արյունազեղումներով և ունեն լավ ապրելիություն բարձրորակ բուժօգնության պարագայում: Սա ենթադրում է, որ բարձրորակ բուժօգնությունն ունի էական ազդեցություն ՄՆԱ-ի մահացության և հաշմանդամության վրա: Այս ուղեցույցն ունի երկու նպատակ: Նախ, տրամադրել 2010 թ. ԱՍԱ/ԱԿԱ հրապարակած ուղեցույցի թարմացում՝ հրապարակելով նոր հետազոտությունների տվյալներ: Այնուհետև հիշեցնել բժիշկներին իրենց դերի մասին ՄՆԱ ելքերի բարելավման մեջ և ապահովել ապացուցողական հիմք ունեցող բուժօգնություն: Այս ուղեցույցի նպատակն է տրամադրել բժիշկներին ուղղորդում ՄՆԱ-ով պացիենտների ախտորոշման և բուժման ճիշտ մեթոդների ընտրության համար:

## **Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն**

Սույն ուղեցույցը մշակվել է ԵՊԲՀ նյարդավիրաբուժության ամբիոնի կողմից: Տեղեկատվության հավաքագրման մարտավարությունը ընդգրկել է բանալի բառերի օգնությամբ իրականացվող բազմաբնագավառ որոնում MEDLINE, PubMed, Cochrane library, National Guideline Clearinghouse և UpToDate շտեմարաններում: Որոնման ժամանակային շրջանակն է՝ 2008 – 2017թթ.: Փաստաթղթերի նկատմամբ կիրառվել են

հետևյալ տեսակավորման ցուցանիշները՝ ապացուցողական բնույթ (համակարգված ամփոփ տեսություն, ցանկացած խոհուրդի վերաբերյալ հստակ հղումների առկայություն, ապացույցների ուժի և որակի գնահատականներ և այլ), ազգային կամ համաշխարհային ամփոփումների կարգավիճակ, անգլերեն լեզու: Փաստաթղթի հիմք է հանդիսացել Ամերիկյան Սրտի և Աոնցիացիայի(ԱՍԱ)/Ամերիկյան Կաթվածի Աոնցիացիայի (ԱԿԱ) 2015թ. հրապարակած «Սպոնտան ներուղեղային արյունազեղման վարման ուղեցույց»-ը (Guidelines for the Management of Spontaneous Intracerebral Hemorrhage A Guideline for Healthcare Professionals From the American Heart Association/American Stroke Association ) ինչպես նաև MEDLINE, PubMed, Cochrane library և UpToDate շտեմարանների արդի տվյալները: Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս սկզբնաղբյուր հանդիսացող փաստաթղթում, հիմք է ընդունվել ԱՍԱ Կաթվածի խորհուրդի ապացույցների դասակարգումը ( մանրամասները տես՝ Հավելված 1.):

Ուղեցույցի տեղայնցաման գործընթացը իրականացվել է համաձայն միջազգային ADAPTE մեթոդաբանության: Բոլոր խորհուրդները քննարկվել և հավանության են արժանացել ԵՊԲՀ նյարդավիրաբուժության ամբիոնի աշխատակիցների կողմից (արձանագրությունը կցվում է): Սույն փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 3 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց: Ուղեցույցը նախատեսված է՝ նյարդավիրաբույժների, նյարդաբանների, ինտենսիվ թերապևտների, անհետաձգելի բուժօգնության աշխատակիցների և առողջապահության կազմակերպիչների համար:

## **Անհապաղ ախտորոշումը և գնահատումը**

ՄՆԱ-ն անհետաձգելի բժշկական իրավիճակ է: Պացիենտների վաղ ախտորոշումը և վարումը խիստ կարևոր է, քանի որ ախտանիշերի ի հայտ գալուց մի քանի ժամ հետո կտրուկ վատացումը շատ հաճախ է պատահում: Պացիենտների 20 %-ի մոտ նկատվում է ԳԿՍ –ով 2 և ավել միավորի անկում սկզբնական նախահիվանդանոցային գնահատման և անհետաձգելի բուժօգնության բաժանմունքում գնահատման միջև [6]: Ավելին, հիվանդների 15-23%-ի մոտ նկատվում է շարունակական վատացում հիվանդանոց

ընդունվելու մի քանի ժամերի ընթացքում [7, 8]: Վաղ նյարդաբանական վատթարացման բարձր ռիսկը և անբարենպաստ ելքերի բարձր հաճախականությունն ընդգծում են վաղ ագրեսիվ վարման կարևորությունը:

### **Նախահիվանդանոցային վարումը**

Նախահիվանդանոցային վարումը նման է **իշեմիկ** կաթվածների նախահիվանդանոցային վարման ընդունված սկզբունքներին [9]: Անհետաձգելի բուժօգնության հիմնական նպատակը շնչուղիների անցանելիության ապահովումն է, սիրտ-անոթային համակարգի նորմալ գործունեության ապահովումը և հիվանդի տեղափոխումը մոտակա մասնագիտացված բուժ. հաստատություն [10]: Երկրորդային նպատակներն են՝ մանրակրկիտ անամնեզի հավաքումը, գրանցելով ախտանիշների ի հայտ գալու ժամանակը, կյանքի անամնեզը, ընդունած դեղորայքը և ընտանիքի անդամների կոնտակտային տվյալները: Անհետաձգելի բուժօգնության անձնակազմը պետք է նախապես տեղեկացնի ընդունող բուժհաստատությանը պացիենտի ժամանման վերաբերյալ, որպեսզի հնարավորություն ստեղծվի առավելապես արդյունավետ մոբիլիզացվեն շտապ ախտորոշման և բուժօգնության համար պահանջվող կադրային և տեխնիկական ռեսուրսները: Այս կարգի վաղ իրազեկումը զգալի նվազեցնում է ընդունումից մինչև համակարգչային շերտագրության միջև ընկած ժամանակահատվածը [11]: Համաձայն երկու հետազոտությունների տվյալների ՀՇ սարքերով հագեցված հատուկ շտապօգնության մեքենաների առկայության պարագայում, նախահոսպիտալային փուլում իրականացված ՀՇ հետազոտությունը թույլ է տվել կատարել օպտիմալ բուժհաստատության ընտրություն և ապահովել է ՄՆԱ համապատասխան բուժման վաղ մեկնարկը [12, 13]:

### **Անհետաձգելի բուժօգնության բաժանմունքում վարումը**

Յուրաքանչյուր բուժօգնության բաժանմունք պետք է ունենա պայմաններ ՄՆԱ-ով հիվանդների վաղ վարման կամ համապատասխան մասնագիտացված կենտրոն տեղափոխման համար: Անհրաժեշտ ռեսուրսներն ընդգրկում են նյարդաբանություն,

նյարդավիրաբուժություն, նեյրոռադիոլոգիա, ինտենսիվ թերապիա, որոնք համալրված են որակավորված բուժանձնակազմով: Կոնսուլտանտները պետք է կանչվեն հնարավորինս արագ, կլինիկական գնահատումը պետք է կատարվի արագ, բուժքույրերն ու բժիշկները պետք է աշխատեն զուգահեռ[14,15]: **Աղյուսակ 1**-ում ներկայացված են անամնեզի հավաքման, օբյեկտիվ գննման և ախտորոշիչ հետազոտությունների հիմնական բաղադրիչները: Սկզբնական գնահատումը պետք է ընդգրկի ստանդարտացված գնահատման սանդղակ, քանի որ այդպիսի սանդղակները հեշտացնում են տարբեր կլինիկաների միջև փոխադարձ կապը: Առողջության, կաթվածի ազգային ինստիտուտի սանդղակը (ԱԿԱԻՍ), որն օգտագործվում է իշեմիկ կաթվածի գնահատման համար, կիրառելի է նաև ՄՆԱ-ի համար[24-25]: Սակայն ՄՆԱ-ով հիվանդները սկզբնական շրջանում շատ հաճախ ունենում են ընկճված գիտակցություն, ինչը նվազեցնում է ԱԿԱԻՍ սանդղակի ինֆորմատիվությունը: Առկա են բազմաթիվ սանդղակներ՝ նախատեսված հատուկ ՄՆԱ-ի համար[26-32]: Չնայած օպտիմալ ծանրության գնահատման սանդղակը հաստատված չէ, ամենակիրառելին ՄՆԱ սանդղակն է [28,30,33-35]:

Ախտորոշումից հետո հիվանդն անհապաղ պետք է տեղափոխվի ինտենսիվ թերապիայի բաժանմունք և սկսվեն բուժական միջոցառումները: Միակենտրոն հետազոտությունը ցույց է տվել, որ անհետաձգելի բաժանմունքում երկարատև գտնվելը վատացնում է ելքերը, սակայն վաղ ինտենսիվ թերապիան լավացնում է այն[36,37]: Չնայած բազմաթիվ կենտրոններ մշակել են ներքին գործելակարգեր իշեմիկ կաթվածի վարման համար, քչերն ունեն ՄՆԱ-ի վարման գործելակարգեր[38,39]:

Աղյուսակ 1.

**Անամնեզի հավաքման, օբյեկտիվ գննման և ախտորոշիչ հետազոտությունների հիմնական բաղադրիչները**

|   | Մեկնաբանություններ |
|---|--------------------|
| <p align="center"><b>Անամնեզ</b></p> <p>Ախտանիշների հայտ գալու ժամանակը<br/>                     Սկզբնական ախտանիշները և ախտանիշների պրոգրեսիան</p> |                    |



|   |  |
|---|--|
| Անոթային դիսկի գործոնները   | Կաթվածի անամնեզ, հիպերտենզիա, շաքարային դիաբետ, ծխել   |
| Օգտագործվող դեղորայք  | Հակաազրեզանտներ, հակամակարդիչներ, հակահիպերտենզիվներ, սիմպաթոմիմետիկներ  |
| Վերջերս վիրահատություն կամ վնասվածք                               | Կարոտիդ էնդարտերէկտոմիա կամ ստենտավորում, քանի որ նման դեպքերում հիպերպերֆուզիայից կարող է առաջանալ ՄՆԱ                                |
| Դեմենցիա  | Կապված է ամիլոիդային անգիոպաթայի հետ   |
| Ալկոհոլի կամ թմրադեղերի չարաշահում                                | Կոկաինը և ադրենոմիմետիկները զուգակցվծ են ՄՆԱ-ի բարձր դիսկի հետ   |
| Ցնցումներ   |  |
| Լյարդի հիվանդություններ   | Կարող է կապված լինել կոագուլոպաթիայի հետ   |
| Ուռուցքային և հեմատոլոգիական հիվանդություններ                     | Կարող է կապված լինել կոագուլոպաթիայի հետ   |
| <b>Օբյեկտիվ գնում</b>   |  |
| Կենսական ֆունկցիաներ  |  |
| Ընդհանուր ֆիզիկական քննություն                                    |  |
| Նյարդաբանական քննություն  | ԱԿԱԻՍ կարող է լրացվել թոպեների ընթացքում: ԳԿՍ նույնպես հեշտ է լրացնել և լայն տարածված է:   |
| <b>Արյան և մեզի քննություններ</b>                                 |  |
| Արյան, մեզի ընդհանուր քննություններ, արյան բիոքիմիական քննություն | Գլյուկոզայի բարձր մակարդակներն ունեն վատ կանխատեսող նշանակություն  |
| Մակարդելիություն  | Վարֆարին-զուգակցված արյունազեղումներն ունեն արյունազեղման ավելի մեծ չափսեր, մեծացման բարձր դիսկ, բարձր մահացություն և հաշմանդամություն |
| Արտային-սպեցիֆիկ տրոպոնին   | Տրոպոնինի բարձր մակարդակները զուգակցված վատ ելքի հետ   |
| Տոքսիկոլոգիական հետազոտություն                                    |  |
| Մեզի քննություն   |  |
| <b>Այլ համընդունված հետազոտություններ</b>                         |  |
| Նեյրոնկարահանում  | ԿՏ կամ ՄՌՏ, անհրաժեշտության դեպքում  |

## Նեյրոնկարահանում

Օջախային նյարդաբանական ախտանիշները հանկարծակի առաջացումը պետք է դիտարկել որպես կաթված, քանի դեռ չի ապացուցվել հակառակը, սակայն հիմնվելով միայն նյարդաբանական ախտանիշների վրա հնարավոր չէ տարբերակել դրա իշեմիկ կամ հեմոռագիկ տարատեսակը: Փսխումը, բարձր սիստոլիկ ճնշումը(>220 մմ սս), ուժեղ գլխացավը, գիտակցական խանգարումները ընդհուպ կոմա, ախտանիշների զարգացումը ընթացքի կամ ժամերի ընթացքում ավելի բնորոշ են ՄՆԱ-ին, սակայն դրանցից ոչ մոկը սպեցիֆիկ չէ, ուստի նեյրոնկարահանումը խիստ պարտադիր է[40]: Գլխուղեղի ԿՏ կամ ՄՌՏ կարող են կիրառվել սկզբնական գնահատման համար: ԿՏ-ն շատ զգայուն է սուր արյունազեղման հայտնաբերման մեջ և դիտարկվում է որպես «ոսկե ստանդարտ»: ՄՌՏ-ն gradient echo և T2 ռեժիմներում ունի նույն զգայունությունը սուր արյունազեղման հայտնաբերման համար, սակայն ավելի զգայուն է նախկինում տարած արյունազեղումների հայտնաբերման մեջ[41,42]: Ժամանակը, արժեքը, անհետաձգելի բաժանմունքին մոտ լինելը, հիվանդի տանելիությունը, կլինիկական վիճակը երբեմն կարող են տրամադրել իրականացնելու ՄՌՏ հետազոտություն[43]: Հեմատոմայի մեծացումը տեղի է ունենում ՄՆԱ ախտանիշների ի հայտ գալուց հետո վաղ շրջանում և կապված է վատ ֆունկցիոնալ ելքերի և մահվան բարձր ռիսկերի հետ[7,44-49]: ՄՆԱ ախտանիշների ի հայտ գալուց 3 ժամվա ընթացքում գլխուղեղի ԿՏ հետազոտություն անցած հիվանդների 28-38 %-ի մոտ, դինամիկ ԿՏ հետազոտությամբ հայտնաբերվում է սկզբնական հեմատոմայի չափսերի մեծացում սկզբնական չափսի 1/3-ից ավել[7][45]: ԿՏ-անգիոգրաֆիան կամ կոնտրաստային ԿՏ հետազոտությունները կարող են հայտնաբերվել ՄՆԱ մեծացման բարձր ռիսկ ունեցող հիվանդներին՝ դատելով կոնտրաստի առկայության վրա հեմատոմայի մեջ (spot sign)[50-54]:

Ենթադիր անոթային պաթոլոգիայի վաղ ախտորոշումը կարող է ազդել կլինիկական վարման և ելքի կանխատեսման վրա: Անոթային պաթոլոգիայի ռիսկերն են՝ <65 տարիքը, չձխելը, իգական սեռը, բլթային արյունազեղումը, ներփորոքային տարածումը,

հիպերտենզիայի և կոագուլոպաթիայի բացակայությունը[57,58]: ՄՌՏ, ՄՌ-անգիոգրաֆիա, ՄՌ-վենոգրաֆիա, ԿՏ-անգիոգրաֆիա, ԿՏ վենոգրաֆիա հետազոտությունները կարող են հայտնաբերել արյունազեղման սպեցիֆիկ պատճառները, ներառյալ՝ անևրիզմա, արտերիովենոզ մալֆորմացիա, ուռուցք, մոյամոյա հիվանդություն, երակային կամ սինուս-թրոմբոզ[59-61]: ԿՏ-անգիոգրաֆիան ավելի լայնորեն է հետազոտվել և ունի բարձրզայունություն և սպեցիֆիկություն անոթային պաթոլոգիան հայտնաբերելու համար[58,62-64]: Ախտորոշիչ ցերեբրալ անգիոգրաֆիան կարող է կիրառվել, եթե ոչ ինվազիվ հետազոտություններով անոթային պաթոլոգիայի կասկածը մեծ է [65]: Ենթադիր անոթային պաթոլոգիայի կասկած հարուցող նշաններն են՝ սուբարախնոիդալ արյունազեղման առկայությունը, ՄՆԱ եզրերին լայնացած անոթները կամ կալցիֆիկատները, կեղևային երակների կամ դուրալ սինուսների թերկոնտրաստավորումը, հեմատոմայի անսովոր տեսքը, ՄՆԱ ժամկետին անհամապատասխան պերիֆոկալ այտուցի առկայությունը, արյունազեղման անսովոր տեղակայումը, այլ ծավալային գոյացությունների առկայությունը[66]:

Ընդհանրացնելով՝ ՄՆԱ-ն անհետաձգելի բժշկական խնդիր է, որը պետք է անհապաղ ախտորոշվի և վարվի: Հեմատոմայի մեծացումը և վաղ վատացումը տեղի է ունենում ախտանշանների ի հայտ գալուց հետո մի քանի ժամ հետո:

- 1) **ՄՆԱ-ով պացիենտների սկզբնական հետազոտման բաղկացուցիչ մաս պետք է կազմի ելքային վիճակի գնահատումը (դաս I, մակարդակ B):**
- 2) **Շտապ պետք է կատարվի ԿՏ կամ ՄՌՏ՝ կաթվածի հեմոռագիկ և իշեմիկ տիպերի տարբերակման նպատակով (դաս I, մակարդակ A):**
- 3) **Հեմատոմայի մեծացման բարձր ռիսկ ունեցող պացիենտներին հայտնաբերելու նպատակով կարելի է կիրառել ԿՏ-անգիոգրաֆիա կամ կոնտրաստային ԿՏ հետազոտություններ (դաս IIb, մակարդակ B): ԿՏ-անգիոգրաֆիան, ԿՏ-վենոգրաֆիան, կոնտրաստային ԿՏ-ն, կոնտրաստային ՄՌՏ-ն, ՄՌՏ-անգիոգրաֆիան և ՄՌՏ-վենոգրաֆիան, ախտորոշիչ ցերեբրալ անգիոգրաֆիան կարող են կիրառվել արյունազեղման հիմք հանդիսացող անոթային կամ ուռուցքային պաթոլոգիան հայտնաբերելու նպատակով, եթե դրանց կլինիկական և ռադիոլոգիական կասկածը մեծ է (դաս IIa, մակարդակ B):**

**Դեղորայքային բուժումը. Հեմոստազ, կոագուլոպաթիա, հակաագրեգանտներ, խորանիստ երակային թրոմբոզի կանխարգելում**

Մակարդելիության խանգարումները կարող է նպաստել ՍՆԱ-ի առաջացմանը: Ռիսկի բարձր խումբ կազմում են այն պացիենտները, ովքեր ընդունում են օրալ հակաագրեգանտներ, հակամակարդիչներ, ովքեր ունեն մակարդման գործոնների բնածին կամ ձեռքբերովի պակասորդ և նրանք, ովքեր ունեն թրոմբոցիտների որակական կամ քանակական բնածին կամ ձեռքբերովի շեղումներ: Օրալ հակամակարդիչներ ընդունողները կազմում են ՍՆԱ-ով պացիենտների 12-20 %-ը [67-69], տոկոս, որն ավելացել է վերջին տասնամյակներին կյանքի միջին տևողության և հակամակարդիչների ընդունման ավելացման հետ [67,70]: K վիտամինի անտագոնիստները, ինչպիսին վարֆարինն է, ամենահաճախ նշանակվող օրալ հակամակարդիչներն են, սակայն նոր դեղամիջոցները, որոնք չեն պահանջում լաբորատոր մոնիտորինգ և չեն երկարացնում մակարդելիության սկրինինգային ցուցանիշները, աստիճանաբար ավելի հաճախ են կիրառվում, ներառյալ՝ դաբիգատրան[71], ռիվարոքսաբան[72], ապիքսաբան[73]: Այս նոր դեղամիջոցներն ունեն ավելի ՍՆԱ –ի առաջացման ավելի ցածր ռիսկ քան K վիտամինի անտագոնիստները[74]:

Այն պացիենտների շրջանում, որտեղ առկա է մակարդման գործոնի դեֆիցիտ կամ թրոմբոցիտների որակական կամ քանակական խանգարումներ, ցուցված է համապատասխան գործոնի կամ թրոմբոցիտների համալրում, համապատասխան կոնսուլտանտ հեմատոլոգի հսկողության պայմաններում: Եթե ՍՆԱ-ն առաջացել է ներերակային հեպարին ստացող հիվանդի մոտ, ապա կարելի է ներերակային ներարկել պրոտամինի սուլֆատ 1մգ ամեն 100 միավոր հեպարինի հաշվարկով (առավելագույնը 50 մգ), շտկումներ անել՝ հաշվի առնելով հեպարինի ներարկումից անցած ժամանակը[75]: Նմանատիպ դոզավորում կարելի է կիրառել ցածր մոլեկուլյար հեպարին ստացած հիվանդների մոտ, սակայն չեզոքացումը կարող է լինել մասնակի[39]:

**Վիտամին K անտագոնիստներով պայմանավորված ՍՆԱ**

Գոյություն ունեն ուղեցույցներ օրալ հակամակարդիչների չեզոքացման համար[76]: Հիանդների մոտ, ովքեր ստանում են օրալ հակամակարդիչներ, խորհուրդ է տրվում ՄՆՀ-ի արագ կարգավորում [76,77]: Թարմ սառեցված պլազման(ԹՍՊ), K վիտամինի հետ միասին տարիներ շարունակ եղել են հիմնական բուժման միջոցը ԱՄՆ-ում, սակայն վերջերս պրոթրոմբինային կոմպլեքսի կոնցենտրատը(ՊԿԿ), ակտիվացված ՊԿԿ ՈւԳԻՇԱ (ութերորդ գործոնի ինհիբիտորի շրջանցող ակտիվություն), ռեկոմբինանտ ակտիվացված VIIa գործոնը ի հայտ են եկել որպես պոտենցիալ բուժման միջոցներ: Ներերակային K վիտամինի ներարկումն անբավարար է սկզբնական ժամերին, սակայն պետք է կիրառվի K վիտամինի անտագոնիստների չեզոքացման գործընթացում 5-10 մգ դոզայով, սովորաբար դանդաղ ներերակային ճանապարհով: Ազդեցությունը սկսվում է 2 ժամ անց և հասնում առավելագույնին 24 ժամից, եթե լյարդի ֆունկցիան նորմալ է[78]: ԹՍՊ-ի կիրառումը պահանջում է հալեցում, համատեղելիություն, կրում է թոխներարկման ինֆեկցիոն և ալերգիկ բարդություններ, և հաճախ պահանջում է մեծ ծավալների ներարկում ՄՆՀ-ի կարգավորման համար: Մեկ հետազոտությամբ պարզվել է, որ ՄՆՀ-ի կարգավորումը 24 ժամ անց կախված է ԹՍՊ-ի ներարկման ժամանակի հետ, չնայած հիվանդների 17 %-ն այդպես էլ չեն հասել ՄՆՀ<1,4 ցուցանիշի այդ ժամանակահատվածում, ինչը ենթադրում է, որ ԹՍՊ-ի ներարկումը այս եղանակով անբավարար է կոագուլոպաթիայի արագ շտկման համար[79]: ԹՍՊ-ի թերությունները բարձրացրեցին այլընտրանքային միջոցների նկատմամբ հետաքրքրությունը:

ՊԿԿ-երը պլազմայի գործոնների կոնցենտրատ են, որոնք ի սկզբանե ստեղծվել են IX գործոնի դեֆիցիտը (հեմոֆիլիա Ա) բուժելու համար: Եռագործոն ՊԿԿ-ն պարունակում է II, IX, X գործոնները, մինչդեռ քառագործոն ՊԿԿ-ն պարունակում է նաև VII գործոն: ՊԿԿ-ն չի պահանջում համատեղելիություն, կարող ներարկվել արագ փոքր ծավալով (20-40 մլ), հատուկ մշակում է անցել՝ չեզոքացնելու համար ինֆեկցիոն գործոնները: Մի քանի հետազոտություններ ցույց են տվել, որ ՊԿԿ թոպենների ընթացքում շտկում է ՄՆՀ-ն K վիտամինի անտագոնիստներ ընդունող հիվանդների մոտ[80-82]: Չնայած հետազոտությունները ցույց են տվել, որ ՊԿԿ-ն K վիտամինի հետ միասին ավելի արագ են կարգավորում ՄՆՀ-ն քան K վիտամինը և ԹՍՊ-ն միասին, սակայն ոչ մեկը ցույց չի տվել ՊԿԿ-ի դեպքում հիվանդների կլինիկական ավելի լավ ելքեր[83-85]: Մեկ ռանդոմիզացված հետազոտություն համեմատել է ԹՍՊ-ի և ՊԿԿ-ի ազդեցությունը

միայն ԹՍՊ-ի հետ K վիտամինի անտագոնիստով պայմանավորված ՄՆԱ-ով հիվանդների մոտ, և այն հիվանդները, ովքեր ստացել են միայն ԹՍՊ, ստացել են ավելի մեծ ծավալով ԹՍՊ և ունեցել են ավելի շատ կողմնակի ազդեցություններ՝ հիմնականում վերագրելի ծավալային գերբեռնվածությանը[86]: ՊԿԿ-ն կարող է բարձրացնել թրոմբոէմբոլիկ բարդությունների ռիսկը, սակայն այդ ռիսկը ցածր է[80]: 2013 թ-ին մեծ ռադոմիզացված 3-րդ փուլի հետազոտությունը ցույց է տվել ՊԿԿ-ի առավելությունը ԹՍՊ-ի նկատմամբ վարժարիների արագ չեզոքացման համար սուր արյունահոսություն ունեցող 202 հիվանդների մոտ[87]:

Օրալ հակամակարդիչներով պայմանավորված ՄՆԱ-ով հիվանդների մոտ ՄՆՀ-ի թիրախային արժեքը անհայտ է, սակայն այստեղ մեջբերվող հետազոտություններում այն <1,3- <1,5 է[88]: Ռեկոմբինանտ VII a գործոնը, որն արտոնագրված է հեմոֆիլիայի բուժման համար, հետաքրքրություն է ներկայացնում նաև սպոնտան և օրալ հակամակարդիչներով պայմանավորված ՄՆԱ-երի բուժման մեջ: Չնայած ռեկոմբինանտ VII a գործոնը կարող է արագ նորմալացնել ՄՆՀ-ն K վիտամինի անտագոնիստներով պայմանավորված ՄՆԱ-ով հիվանդների մոտ[89-93], սակայն այն չի համալրում բոլոր K վիտամին-կախյալ գործոնները և չի կարող նույն ձև վերակազմել թրոմբինի սինթեզը ինչ ՊԿԿ-ն[94]: Ուստի ռեկոմբինանտ VII a գործոնը ներկայումս խորհուրդ չի տրվում վարժարիների չեզոքացման համար[95]:

### **Նոր հակամակարդիչներով պայմանավորված ՄՆԱ**

Ռանդոմիզացված հետազոտությունները բացակայում են նոր հակամակարդիչներով պայմանավորված ՄՆԱ-ով կամ այլ հեմոռագիկ բարդություններով հիվանդների համար, քանի որ դրանք համեմատաբար նոր են ի հայտ եկել: Ներկայումս հասանելի դեղամիջոցները(դաբիգատրան, ռիվառոքսաբան, ապիաքսաբան) ունեն համեմատաբար կարճ կիսատրոհման ժամանակ՝ 5-15ժ: Մասնակի ակտիվացված թրոմբոպլաստինային ժամանակի և պրոթրոմբինային ժամանակի գնահատումը և հեմատոլոգի հետ խորհրդատվությունն արդարացված են բուժումը անհատապես որոշելու համար: Չեզոքացման համար կարող են կիրառվել ՈՒԳԻՇԱ, ՊԿԿ կամ ռեկոմբինանտ VII a գործոնը: ԹՍՊ-ի օգտակարությունն անհայտ է և K վիտամինն անօգուտ է: Ենթադրվում է, որ ՈՒԳԻՇԱ կամ ռեկոմբինանտ VII a գործոնը կարող են օգտակար լինել թրոմբինի

ուղղակի ինհիբիտոր դաբիգատրանի համար, մինչդեռ այլ ՊԿԿ կարող են կիրառվել Xa գործոնի ինհիբիտոր ռիվառոքսաբանի և ապիաքսաբանի համար [96-99], սակայն այս տվյալները նախնական են: Ակտիվացված ածուխ կարելի է կիրառել, եթե դաբիգատրանի, ռիվառոքսաբանի, ապիաքսաբանի վերջին դոզան ընդունվել է վերջին 2 ժամերի ընթացքում [100]: Հեմոդիալիզը դիտարկվում է որպես տարբերակ դաբիգատրանի չեզոքացման համար, սակայն ավելի քիչ արդյունավետ է ռիվառոքսաբանի և ապիաքսաբանի համար, քանի որ վերջիններս ավելի շատ են կապվում սպիտակուցների հետ[90]: Այս դեղամիջոցների սպեցիֆիկ անտիդոտները վաղ մշակման փուլում են[101]:

### **Հակաագրեգանտներով պայմանավորված ՄՆԱ**

Հետազոտությունները, որոնք ուսումնասիրել են հակաագրեգանտների կիրառման և թրոմբոցիտային դիսֆունկցիայի ազդեցությունը ՄՆԱ-ի առաջացման վրա, եկել են հակասական արդյունքների: Հակաթրոմբոցիտային բուժումը ազդեցություն չի ունեցել հեմատոմայի մեծացման կամ կլինիկական ելքի վրա ՄՆԱ հետազոտման պլացեբո խմբում[102]: Մյուսները ենթադրում են, որ թրոմբոցիտային դիսֆունկցիան կարող է կապված լինել հեմատոմայի մեծացման և կլինիկական ելքի հետ[103,104]: Հետազոտությամբ, որն ընդգրկել է ՄՆԱ ունեցող և թրոմբոցիտար փոխներարկում ստացած 45 հիվանդեր, հայտնաբերվել է թրոմբոցիտների ռեակտիվականության ավելացում փոխներարկումից հետո ըստ VerifyNow-ASA թեստի[105]: Ներկայումս երկու ռանդոմիզացված հետազոտություններ են ընթանում, որոնց նպատակն է ուսումնասիրել թրոմբոցիտների փոխներարկումը ՄՆԱ ունեցող և հակաագրեգանտներ ստացող հիվանդների մոտ[106,107]:

### **Ռեկոմբինանտ VII a գործոնի դերը հակամակարդիչների հետ չկապված ՄՆԱ-ի դեպքում**

Ռեկոմբինանտ VII a գործոնը հետազոտվել է հակամակարդիչներով չպայմանավորված ՄՆԱ-ով հիվանդների մոտ: Չնայած 2-րդ փուլի ռանդոմիզացված հետազոտությունը ցույց է տվել, որ ՄՆԱ-ի սկզբից 4 ժամերի ընթացքում ռեկոմբինանտ VII a գործոնով բուժումը սահմանափակում է հեմատոմայի մեծացումը և բարելավում կլինիկական ելքերը պլացեբոյի հետ համամատած, սակայն հաջորդ՝ 3-րդ փուլի

հետազոտությունը չտվեց որևէ տարբերություն[108,109]: Ռեկոմբինանտ VII a գործոնի կիրառումն առաջացրել է ավելի շատ թրոմբոէմբոլիկ բարդություններ 2-րդ և 3-րդ փուլի հետազոտություններով (7% պլացեբոյի 2%-ի դիմաց): Մնում է պարզել արդյոք ռեկոմբինանտ VII a գործոնը կարող է օգուտ տալ ՄՆԱ որոշ ենթախմբի հիվանդներին, սակայն ներկայումս դրա տված օգուտը մնում է չապացուցված:

### **ՄՆԱ-ով հիվանդների թրոմբոկանխարգելումը**

ՄՆԱ-ով հիվանդներն ունեն թրոմբոէմբոլիկ հիվանդության բարձր ռիսկ[110]: Կանայք և սևամորթներն ունեն ամենաբարձր ռիսկը [110-112]: ՄՆԱ-ով 151 հիվանդներ ընդգրկող հետազոտությամբ ընդմիջվող օդային սեղմող գուլպաները էլաստիկ գուլպաների հետ միասին նվազեցնում է խորանիստ երակների թրոմբոզն ավելի շատ քան միայն էլաստիկ գուլպաները (4.7%ընդդեմ 15,9%)[113]: CLOTS հետազոտությունը, որը կազմված է 3 առանձին հետազոտություններից (CLOTS 1, CLOTS 2, CLOTS 3), գնահատել է բուժման տարբեր մեթոդները, ներառյալ՝ աստիճանական օդային սեղմող գուլպաներն ընդդեմ ոչ մի բանի, ազդրի երկարությամբ գուլպաներն ընդդեմ սրունքի երկարության, և ընդմիջվող օդային սեղմող գուլպաներն ընդդեմ ոչնչի[114-117]: CLOTS 1-ն ընդգրկել է 2518 կաթվածով հիվանդներ (որոնցից 232 ՄՆԱ-ով) և պարզել է, որ ազդրի երկարությամբ աստիճանական օդային սեղմող գուլպաները չեն նվազեցնում խորանիստ երակային թրոմբոզը(ԽԵԹ), թոքային զարկերակի թրոմբոէմբոլիան (ԹԶԹԷ) և մահացությունը [115]: CLOTS 2-ը պարզել է, որ խորանիստ երակների թրոմբոզն ավելի հաճախ է հանդիպում ծնկից ցածր աստիճանական օդային սեղմող գուլպաների դեպքում քան ազդրի երկարությամբ աստիճանական օդային սեղմող գուլպաների պարագայում[114]: Վերջապես, CLOTS 3-ը, որն ընդգրկել է 2876 հիվանդներ, որոնցից 376-ը ՄՆԱ-ով, պարզել է, որ ընդմիջվող օդային սեղմող գուլպաների կիրառումը, սկսած հիվանդանոց ընդունվելու պահից, նվազեցնում է պրոքսիմալ խորանիստ երակային թրոմբոզի հաճախականությունը: Արդյունքն ավելի ակնհայտ է հեմոռագիկ կաթվածով հիվանդների մոտ(6.7% ընդդեմ 17%)[116]: Մետա-անալիզը, որն ընդգրկել է ՄՆԱ-ով 1000 հիվանդներ 4 հետազոտություններից (2-ը ռանդոմիզացված) և հետազոտել է էնոքսապարինի կամ հեպարինի վաղ կիրառումը (1-ից 6 օրերի ընթացքում ընդունումից հետո), հայտնաբերել է թոքային զարկերակի թրոմբոէմբոլիայի նվազում (1.7 % ընդդեմ 2.9 %, հարաբերական



ռիսկը 0.37; 95% CI, 0.17–0.80), մահացության որոշ նվազում(16.1 % ընդդեմ 20.9 %, հարաբերական ռիսկը, 0.76; 95% CI, 0.57–1.03), սակայն ոչ մի տարբերություն խորանիստ երակների թրոմբոզի (4,2% ընդդեմ 3,3 %, հարաբերական ռիսկը 0.77; 95% CI, 0.44–1.34) կամ հեմատոմայի մեծացման մեջ(8.0% ընդդեմ 4.0%; RR, 1.42; 95% CI, 0.57–3.53)[118]:

ՄՆԱ-ով հիվանդները, ում մոտ առաջանում է ԹՁԹԷ կամ ԽԵԹ, կարող են ենթարկվել համակարգային հակամակարդիչ բուժման կամ կավա-ֆիլտրի տեղադրման: Հաշվի առնելով ԹՁԹԷ-ի ոչ մահացում կրկնման հավանականությունը 12%-15% է չբուժված հիվանդների մոտ, միայն հսկողությունն անընդունելի է: Սահմանափակ ինֆորմացիա է հասանելի, ընտրել համակարգային հակամակարդում թ՛ե կավա-ֆիլտր, ինչպես նաև ո՞ր հակամակարդիչն ընտրել[119]: Պետք է հաշվի առնել արյունազեղումից հետո ԹՁԹԷ/ԽԵԹ ախտորոշման օրը, հեմատոմայի կայունությունը դինամիկ ռադիոլոգիական հետազոտություններով, հեմատոմայի լրբար կամ խորանիստ տեղակայումը, կավա-ֆիլտրի հեռացնելու պրակտիկ հնարավորությունը ուշ շրջանում[120]:

- 1) **Որևէ մակարդելիության գործոնի պակասորդ կամ թրոմբոցիտոպենիա ունեցող հիվանդները պետք է ստանան համապատասխան գործոնի կամ թրոմբոցիտների փոխարինողական բուժում (դաս I, մակարդակ C):**
- 2) **Հիվանդները, ում ՄՆՀ-ն բարձր է ՎԿԱ-երի պատճառով, պետք է դադարեցնեն վերջինի ընդունումը, ստանան վիտամին Կ-կախյալ գործոնների փոխարինողական բուժում և ստանան ներերակային վիտամին Կ (դաս I, մակարդակ C): Պրոթրոմբինային կոմպլեքսի կոնցենտրատը (ՊԿԿ) կարող է ունենալ ավելի քիչ բարդություններ թարմ սառեցված պլազմայի (ԹՍՊ) և ավելի արագ կարգավորի ՄՆՀ-ն, ուստի նախապատվությունը պետք է տրվի ՊԿԿ-ին է (դաս IIb, մակարդակ B): nVIIaԳ չի փոխարինում բոլոր մակարդման գործոնները, և չնայած ՄՆՀ-ն կարող է իջեցվել, մակարդելիությունը կարող է չվերականգնել ամբողջությամբ, ուստի nVIIaԳ խորհուրդ չի տրվում ՎԿԱ ազդեցությունը չեզոքացնելու նպատակով (դաս III, մակարդակ C):**
- 3) **Հիվանդների մոտ, ովքեր ստացել են ռիվառոքսաբան(Քսարլետո), կարելի է կիրառել ՈՒԳԻՇԱ (ՊԿԿ-ի տարատեսակ) կամ nVIIaԳ: Եթե ռիվառոքսաբանի**

- վերջին դոզան ընդունվել է վերջին 2 ժամերի ընթացքում, չեզոքացման նպատակով կարելի է կիրառվել ակտիվացված ածուխ (դաս IIb, մակարդակ C):
- 4) Սուր ՍՆԱ-ով հիվանդների մոտ հեպարինի չեզոքացման նպատակով կարելի է կիրառվել պրոտամինի սուլֆատ (դաս IIb, մակարդակ C):
- 5) Հակաազրեգանտներ ընդունող հիվանդների մոտ թրոմբոցիտար զանգվածի փոխներարկման արդյունավետությունն անորոշ է (դաս IIb, մակարդակ C):
- 6) Չնայած nVIIaԳ կարող է սահմանափակել հեմատոմայի չափսերի մեծացումը կոագուլոպաթիա չունեցող հիվանդների մոտ, nVIIaԳ կիրառման ժամանակ մեծանում է թրոմբոէմբոլիկ բարդությունների ռիսկը և չկա հստակ կլինիակակն արյունք: Ուստի nVIIaԳ կիրառումը խորհուրդ չի տրվում (դաս III, մակարդակ A):
- 7) ՍՆԱ-ով հիվանդները պետք է կրեն ընդմիջվող օդային սեղմող գուլպաներ ընդունման պահից սկսած՝ երակային թրոմբոէմբոլիզմը կանխելու նպատակով (դաս I, մակարդակ A):
- 8) Արյունահոսության դադարեցման արձանագրումից հետո փոքր դոզայով ենթամաշկային ցածր մոլեկուլյար կշռով հեպարինը կամ չֆրակցիոնացված հեպարինը կարող է կիրառվել արյունազեղումից 1-4 օր հետո՝ անշարժ հիվանդների մոտ երակային թրոմբոէմբոլիզմը կանխելու նպատակով (դաս IIb, մակարդակ B):
- 9) Խորանիստ երակային թրոմբոզի կամ թոքային թրոմբոէմբոլիզմի նշանների դեպքում հավանաբար ցուցված է կավա-ֆիլտրի տեղադրում կամ համակարգային հակակոագուլյանտների կիրառում (դաս IIa, մակարդակ C): Մեթոդներից որևէ մեկի օգտին որոշում կայացնելիս պետք է հաշվի առնել՝ արյունազեղման սկզբից անցած ժամանակը, արյունազեղման կայունությունը, արյունազեղման պատճառը և հիվանդի ընդհանուր վիճակը (դաս IIa, մակարդակ C):

**Չարկերակային ճնշման կարգավորումը**

**Չարկերակային ճնշումը և ՍՆԱ-ի ելքը**

Բարձր ՋՃ-ն շատ հաճախ է հանդիպում ՄՆԱ-ի դեպքում[122,123], մի շարք գործոնների պատճառով, ներառյալ՝ սթրես, ցավ, բարձր ՆԳՃ, անամնեզում առկա զարկերակային հիպերտենզիա: Բարձր սիտոլիկ ՋՃ-ն կապված է հեմատոմայի մեծացման, նյարդաբանական վատացման, մահվան և կախվածության հետ ՄՆԱ-ից հետո [122,124]: Ի տարբերություն իշեմիկ կաթվածի, միայն եկ հետազոտություն է ցույց տվել ՄՆԱ-ի վատ ելքեր ցածր (<140 մմ սս) սիտոլիկ ՋՃ դեպքում [125,126]:

### **Վաղ ինտենսիվ հակազերճնշումային բուժման արդյունավետությունն ու անվտանգությունը**

Հետազոտությունները ներյոնկարահանման ընդգրկմամբ ցույց են տվել ՄՆԱ-ի շուրջ իշեմիկ պենումբրայի բացակայություն[127]՝ հարիեմատոմային հիպոդենսությունը կապելով պլազմայի էքստրավազալայի հետ[128]: Ռանդոմիզացված հետազոտությունը ԿՏ պերֆուզիայի օգտագործմամբ փոքր և միջին չափսերի հեմատոմաների դեպքում ցույց է տվել ուղեղի արյան հոսքի կլինիկորեն ոչ նշանակալի իջեցում հեմատոմայի շուրջ սիտոլիկ ՋՃ-ն վաղ ակտիվ իջեցնելիս թիրախային <140 մմ սս արժեքին ՄՆԱ-ի սկզբից մի քանի ժամերի ընթացքում[129-133]: Բավականին վերջերս, INERACT հետազոտությունը ցույց է տվել մահացության և լուրջ կողմնակի ազդեցությունների ավելացման բացակայություն բարձր սիտոլիկ ՋՃ-ով հիվանդների մոտ ՋՃ արագ վաղ իջեցման դեպքում[134]: Մի քանի հետազոտություններ ցույց են տվել, որ դիֆուզիոն ՄՌՏ ով հայտնաբերված փոքր իշեմիկ օջախները հաճախ են ՄՆԱ –ով հիվանդների մոտ, սակայն դրանց ազդեցությունը ելքի վրա կամ կախվածությունը ՋՃ իջեցման հետ տարբեր է հետազոտությունից հետազոտություն[135]:

- 1) **ՄՆԱ-ով հիվանդների մոտ, ովքեր ունեն 150 -220 մմ սս սիտոլիկ զարկերակային ճնշում ընդունման ժամանակ, հակացուցումների բացակայության դեպքում սիտոլիկ ՋՃ իջեցումը մինչև 140 մմ սս անվտանգ է (դաս I, մակարդակ A) և կարող է արդյունավետ լինել ֆունկցիոնալ ելքը լավացնելու համար (դաս IIa, մակարդակ B):**
- 2) **ՄՆԱ-ով հիվանդների մոտ, ովքեր ունեն >220 մմ սս սիտոլիկ զարկերակային ճնշում ընդունման ժամանակ, խելամիտ է ճնշման իջեցում**

**հակահիպերտենզիվ դեղորայքի շարունակական ներերակային ներարկում և  
ԶՃ մշտական մոնիտորինգ (դաս IIb, մակարդակ C):**

**Ընդհանուր մոնիտորինգը և ինտենսիվ բուժումը**

**Ընդհանուր մոնիտորինգը**

ՄՆԱ-ով հիվանդները հաճախ բժշկական և նյարդաբանական առումով անկայուն են, հատկապես սկզբնական մի քանի օրերի ընթացքում: ՄՆԱ-ով հիվանդների վարումը մասնագիտացված նեյրովերակենդանացման բաժանմունքում կապված է ավելի փոքր մահացության հետ[136]: INTERACT 2 հետազոտությունում հիվանդների մեծ մասը բուժվել է ոչ թե ընդհանուր վերակենդանացման բաժանմունքում, այլ մասնագիտացված նեյրովերակենդանացման բաժանմունքում[134]: Կենսական տվյալների, նյարդաբանական վիճակի գնահատումը, շարունակական սիրտ-թոքային մոնիտորինգը պետք է լինեն ստանդարտ:

**Բուժքույրական խնամքը**

Վերակենդանացման բաժանմունքում հատուկ բուժքույրական խնամքը կարող է ներառել՝ (1) ներգանգային ճնշման, ուղեղի պերֆուզիոն ճնշման, հեմոդինամիկ ֆունկցիաների հսկողություն, (2) ՆԳՃ, ԶՃ, մեխանիկական օդափոխության, տենդի և գլյուկոզայի վարման գործելակարգերի կիրառում, (3) անշարժության հետ կապված բարդությունների կանխարգելում ճիշտ դիրքավորման, շնչուղիների նորմալ անցանելիության ապահովման և ֆիզիկական տոլերանտության սահմաններում ակտիվացման միջոցով: Բուժքույրեր պետք է կրթված լինեն մոնիտորինգի և բարդությունների կանխարգելման այս հատուկ ուղղություններում[137]: Բուժքույրերը պետք է կրթված լինեն նաև նյարդաբանական վիճակի ստանդարտացված աղյուսակների (ԱԿԱԻՍ, ԳԿՍ, ԳԵՍ) առումով [138,139]:

- 1) **ՄՆԱ-ով պացիենտների սկզբնական մոնիտորինգը և վարումը պետք է կատարվի ինտենսիվ թերապիայի բաժանմունքում կամ մասնագիտացված նեյրոինտենսիվ թերապիայի բաժանմունքում, որոնք համալրված են**

**համապատասխան կրթություն ստացած բուժանձնակազմով (դաս I, մակարդակ B):**

### **Գլուկոզի կարգավորումը**

ՄՆԱ-ով հիվանդների մոտ ընդունման պահին բարձր գլուկոզի մակարդակը կանխատեսում է բարձր մահացություն և վատ ելք, անկախ շաքարային դիաբետի առկայությանից[140-144]: Ռանդոմիզացված հետազոտությունը, որը ցույց տվեց բարելավված ելքեր ինսուլինի ներարկման միջոցով գլուկոզի խիստ հսկողությամբ, հաճախացրեց այս բուժման կիրառումը[141]: Սակայն վերջին հետազոտությունները ցույց տվեցին հաճախակի համակարգային և ցերեբրալ հիպոգլիկեմիկ դեպքեր, հավանաբար նաև բարձր մահացություն այս բուժման կիրառման դեպքում[145-148]: Ներկայումս ՄՆԱ-ով հիվանդների մոտ գլուկոզի օպտիմալ մակարդակները որոշված չեն: Պետք է խուսափել հիպոգլիկեմիայից[149]:

- 1) **Գլուկոզը պետք է խիստ հսկվի: Պետք է խուսափել և՛ հիպոգլիկեմիայից, և՛ հիպերգլիկեմիայից (դաս I, մակարդակ C):**

### **Ջերմության կարգավորումը**

Տենդը վատացնում է գլոպուլեդի վնասման դեպքում կլինիկական ելքը փորձարարական մոդելներում [150,151]: Տենդը հաճախակի է ՄՆԱ-ով հիվանդների մոտ, հատկապես ներփորոքային արյունազեղման դեպքում: Հիվանդների մոտ, ովքեր ապրում են առաջին 72 ժամն ընդունումից հետո, տենդի տևողությունը կապված է ֆունկցիոնալ ելքի հետ և այս հիվանդների մոտ անկախ կանխատեսիչ գործոն է [152]: Տենդը կարող է կապված լինել նաև հեմատոմայի մեծացման հետ, սակայն պատճառահետևանքային կապը պարզ չէ [153]: Չնայած այս տվյալները խոսում են տենդի բուժման օգտին ՄՆԱ-ով հիվանդների մոտ, սակայն նորմոթերմիայի պահումը չի դրսևորվել բարենպաստ ելքի համար[149,153]: Մարդկանց և կենդանիների մոտ հետազոտությունների նախնական տվյալները ենթադրում են պերիֆոկալ այտուցի նվազում հիպոթերմիայի դեպքում[155,156]:

Այնուամենայնիվ, ներկայումս ՄՆԱ-ով հիվանդների բուժումը հիպոթերմիայի պայմաններում պետք է դիտարկել փորձարարական[157]:

- 1) **ՄՆԱ-ով բոլոր հիվանդների մոտ պետք է խուսափել հիպերթերմիայից (դաս IIb, մակարդակ C):**

### **Ցնցումներ և հակացնցումային դեղորայքը**

Վաղ կլինիկական ցնցումների (<7 օր) հաճախականությունը ՄՆԱ-ից հետո 16 % է, որոնց մեծամասնությունը պատահում է ՄՆԱ-ի սկզբնական ժամանակաշրջանում[158,159]: ՄՆԱ-ի կեղևային ընդգրկումը վաղ ցնցումների հիմնական ռիսկի գործոնն է[158-160]: Մեծ միակենտրոն հետազոտությամբ պրոֆիլակտիկ հակացնցումային բուժումը զգալիորեն նվազեցրել է կլինիկական ցնցումների քանակը լրբար ՄՆԱ-երի դեպքում[161]: Սակայն պրոսպեկտիվ հետազոտությունները չեն գտել որևէ կապ կլինիկական ցնցումների և նյարդաբանական ելքի կամ մահացության միջև[159,160,162-164]:

Շարունակական էլեկտրոէնցեֆալոգրաֆիայով (էէԳ) հետազոտությունները հայտնաբերել են էլեկտրոգրաֆիկ ցնցումներ ՄՆԱ-ով հիվանդների 28-31%-ի մոտ, չնայած մեծամասնությունը ստացել է հակացնցումային դեղորայք[160,164]: Սուբկլինիկական ցնցումների կլինիկական նշանակությունն անհայտ է: Մի շարք հետազոտություններ պարզել են, որ պրոֆիլակտիկ հակացնցումային դեղորայքը կապված է բարձր մահացության և հաշմանդամության հետ ՄՆԱ-ով հիվանդների մոտ[165-167], չնայած վերջին հետազոտությունը չի գտել որևէ կապ հակացնցումային դեղորայքի և ելքի միջև այն հիվանդների մոտ, ովքեր ապրել են 5 օրից ավել[166]: Վալպրոյաթթվի պրոֆիլակտիկ կիրառմամբ փոքր ռանդոմիզացված հետազոտությունը 1 տարի դինամիկ հսկողության արդյունքում ցույց չի տվել ցնցումների նվազում [168]: Այսպիսով հակացնցումային դեղորայքի կիրառումը ցույց չի տվել կլինիկական օգուտ:

Կլինիկական ցնցումները կամ գիտակցական խանգարումով էլեկտրոգրաֆիկ ցնցումները պետք է վարվեն հակացնցումային դեղորայքով: Շարունակական էէԳ մոնիտորինգը ցուցված է գիտակցական խանգարումներով այն հիվանդներին, ում մոտ

գիտակցական խանգարումը չի համապատասխանում առկա ուղեղի վնասմանը: Էպիլեպսիան հանդիպում է ՄՆԱ-ով երիտասարդ (18-50 տարեկան) հիվանդների 10%-ի մոտ: Տարեց հիվանդների մոտ հետկաթվածային էպիլեպսիայի ռիսկն ավելի ցածր է [169,170]: Էպիլեպսիայի առաջացման ռիսկի գործոններն են՝ կաթվածի ծանրությունը, հեմատոմայի կեղևային տեղակայումը, ուշ առաջնային ցնցումները [169,170]: Չկա որևէ տվյալ, որը ենթադրի, որ հակացնումային դեղորայքի վաղ կիրառումը նվազեցնում է ախտահարման հետ կապված էպիլեպսիայի առաջացումը:

- 1) **Կլինիկորեն արտահայտվող ցնցումները պետք է բուժվեն հակացնումային դեղորայքով (դաս I, մակարդակ A):**
- 2) **Գիտակցական մակարդակի խանգարումով հիվանդները, ովքեր ունեն էլեկտրոֆիզիոլոգիական ցնցումներ ԷԷԳ-ով, պետք է բուժվեն հակացնումային դեղորայքով (դաս I, մակարդակ C):**
- 3) **Գլխուղեղի վնասման աստիճանին չհամապատասխանող գիտակցական խանգարումների դեպքում հավանաբար ցուցված է շարունակական ԷԷԳ մոնիտորինգ (դաս IIa, մակարդակ C):**
- 4) **Պրոֆիլակտիկ հակացնումային դեղորայք խորհուրդ չի տրվում (դաս III, մակարդակ B):**

### **Բարդությունների վարումը**

Սուր կաթվածի դեպքում բարդությունների տոկոսը բավական բարձր է, չնայած ավելի շատ ինֆորմացիա հասանելի է իշեմիկ կաթվածի վերաբերյալ: Լայնածավալ հետազոտության տվյալներով ՄՆԱ-ով հիվանդների 88%-ն ունեցել է առնվազն մեկ բարդություն, որոնցից 40%-ը եղել է լուրջ (բերել է երկարատև հոսպիտալիզացիայի, եղել են կյանքին սպառնացող կամ մահացու): Ամենահաճախ բարդություններն են՝ թոքաբորբ (5,6%), ասպիրացիա (2,6%), շնչառական խանգարումներ (2%), ԹՉԹԵ (1,3%), սեպսիս (1,7%)[171]: Կաթվածից հետո մահերի 50% վերագրելի է բարդություններին, սովորաբար հոսպիտալիզացիայից հետո 1 շաբաթվա ընթացքում: Կաթվածով հիվանդները, ովքեր

ունեցել են բարդություններ հոպիտալիզացիայի ընթացքում, ունեն ավելի բարձր մահացություն 4 տարվա ընթացքում:

Դիսֆագիան և ասպիրացիան թոքաբորբի առաջացման ամենակարևոր ռիսկի գործոններն են: Դիսֆագիան սահմանվում է որպես կլման խանգարում վերին մարսողական ուղում, ներառում է կլման արդյունավետության և անվտանգության նվազում, շարժումների դանդաղում և թուլացում և ասպիրացիա: Այս հիվանդների մոտ ասպիրացիան դիսֆագիայի նշան է, որի ժամանակ առկա է արտաքին սննդանյութերի, հեղուկի և էնդոգեն արտազատուկների հոսք դեպի շնչուղիներ: Ճապոնական ռետրոսպեկտիվ հետազոտությամբ ՄՆԱ-ով հիվանդների 68 % չէին կարող տանել օրալ սնուցումը[172]: ՄՆԱ-ով 208 հիվանդ ընդգրկող գերմանական հետազոտությամբ հիվանդների 25 %-ը կարիք է ունեցել պերկուտան էնդոսկոպիկ գաստրոստոմիայի [173]: Այս հետազոտությամբ ԳԿՍ-ն, օկյուզիոն հիդրոցեֆալիան, մեխանիկական օդափոխությունը, սեպսիսը եղել են դիսֆագիայի և պերկուտան էնդոսկոպիկ գաստրոստոմիայի տեղադրման անկախ ռիսկի գործոններ: Պրոսպեկտիվ բազմակենտրոն հետազոտությամբ, իշեմիկ կաթվածով հիվանդների մոտ դիսֆագիայի պաշտոնական սկրինինգը ( ջրի կլման թեստ) բերել է թոքաբորբի առաջացման ցածր ռիսկի[174]: Թոքաբորբի քանակությունը պաշտոնական սկրինինգի խմբում եղել է 5,4 % ընդդեմ 2,4 %-ի ոչ սկրինինգի խմբում, բացարձակ ռիսկի 3 % նվազում: Լուրջ սրտային խնդիրները և սրտային մահը կաթվածից հետո կարող է պայմանավորված լինել սրտամկանի սուր ինֆարկտով, սրտային անբավարարությամբ, փորոքային առիթմիաներով, ներառյալ՝ փորոքային տախիկարդիա/ֆիբրիլյացիա, և սրտի կանգով: Միաժամանակ գոյություն ունեցող կաթվածն ու սրտամկանի ինֆարկտը հազվադեպ չեն: Ավստրալի կաթվածի ռեգիստրի վերջին տվյալներով, որը ներառում է ՄՆԱ-ով 4984 հիվանդ, հիվանդների 0,3 %-ն ունեցել են սրտամկանի ինֆարկտ [175]: Այս հիվանդներն ունեցել են ոչ միայն բարձր ներհիվանդանոցային մահացություն, այլ ունեցել են ավելի շատ բարդություններ, ներառյալ թոքաբորբ և կաթվածի հարաճում: Անամնեզում տարած սրտամկանի ինֆարկտը նպաստում է նոր ինֆարկտի առաջացմանը: 65996 հիվանդ ընդգրկող և միջինում 3,5 տարի հսկողությամբ մետա-անալիզում սրտամկանի տարեկան ռիսկը եղել է 2,2 %: ՄՆԱ-ով հիվանդների մոտ, տրոպոնինի մակարդակի  $>0,4$  նգ/մլ բարձրացումը հանդիպել է հիվանդների 15 % -ի մոտ ընդունումից առաջին 24 ժամերի



ընթացքում և կապված է եղել բարձր ներհիվանդնացային մահացության հետ[21]: Սուպրատենտորիալ ՄՆԱ-ով 49 հիվանդ ընդգրկող մեկ այլ հետազոտությամբ, 20 %-ն ունեցել են տրոպոնինի բարձր մակարդակ, սակայն դա կապված չի եղել բարձր մահացության հետ 30 օրերի ընթացքում[177]: Սրտային անբավարարությունը կարող է լինել արդյունք սրտամկանի իշեմիայի, ինֆարկտի, սթրեսով հարուցված կարդիոմիոպաթիայի, չկարգավորվող հիպերտենզիայի սուր ՄՆԱ-ի սկզբում: Նեյրոգեն թոքի այտուցը, ինչը ինտերստիցիալ և ավելոյար հեղուկի քանակի ավելացումն է կենտրոնական նյարդային համակարգի վնասման ժամանակ, լավ հետազոտված է սուբարախնդիալ արյունազեղման ժամանակ, հանդիպում է նաև ՄՆԱ-ի դեպքում[178]: Նեյրոգեն թոքի այտուցն առաջանում է սուր և հարաճում արագ նյարդաբանական վնասումից հետո: Ռադիոլոգիական առումով այն չի տարբերակվում կարդիոգեն այտուցից: Սովորաբար այն հետ է զարգանում մի քանի օրերի ընթացքում: Երբեմն կարիք է լինում ինտուբացիայի և մեխանիկական օդափոխության՝ շնչուղիները պաշտպանելու և ավելի շատ թթվածին մատակարարելու նպատակով: ՄՆԱ-ով հիվանդները կարող են ունենալ շնչառական դիսթրես համախտանիշի առաջացման բարձր ռիսկ բազմազան պատճառներով [179], սակայն ներկայումս դրա կանխարգելման ուղիները հետազոտված չեն: Երբ ՄՆԱ-ով հիվանդի մոտ զարգանում է շնչառական դիսթրես համախտանիշ, ցուցված է մեխանիկական օդափոխություն ընդունված սխեմաներով, սակայն պետք է խուսափել ներգանգային ճնշման բարձրացմանը նպաստող ռեժիմներից[180]:

ՄՆԱ-ով հիվանդների մոտ հանդիպող այլ բարդություններն են՝ սուր երիկամային անբավարարություն, հիպոնատրեմիա, ստամոքս-աղիքային արյունահոսություն, թերսնուցում, միզուղիների ինֆեկցիա, հետինսուլտային դեպրեսիա: Սուր նեֆրոպաթիան (կրեատինինի մակարդակի բարձրացում ելքային մակարդակի 25 %-ից ավել) հանդիպել է 539 հիվանդից 41-ի մոտ և կապված չի եղել ԿՏ-անգիոգրաֆիայի հետ [181]: Բարդությունների վաղ հայտնաբերման և բուժման նպատակով լրացուցիչ հետազոտություններ են պահանջվում:

- 1) **Բոլոր պացիենտների մոտ մինչև բերանային սնուցման անցնելը պետք է իրականացվի դիսֆագիայի սկրինինգ՝ խուսափելու համար ասպիրացիոն թոքաբորբից (դաս I, մակարդակ B):**

- 2) **ՄՆԱ-ով պացիենտների շրջանում խելամիտ է պարբերաբար իրականացնել սրտամկանի իշեմիայի կամ ինֆարկտի սկրինինգ** **ԷԿԳ-ով կամ սրտային ֆերմենտների միջոցով (դաս IIa, մակարդակ C):**

### **Միջամտություններ/վիրահատություններ**

Սահմանափակ քանակությամբ հետազոտություններ են հասանելի ՄՆԱ-ով հիվանդների մոտ բարձր ներգանգային հիպերտենզիայի և դրա վարման վերաբերյալ[182-185]: ՄՆԱ-ով 243 հիվանդ ընդգրկող հետազոտությամբ, 57 հիվանդներ (%) ենթարկվել են ներգանգային ճնշման մոնիտորինգի, որոնցից 40-ը (70 %) ունեցել է ներգանգային հիպերտենզիայի (ՆԳՃ >20 մմ սս) առնվազն 1 էպիզոդ [185]: Ներփորոքային արյունազեղում և < 30 մմ <sup>3</sup> ներուղեղային հեմատոմա ունեցող 100 հիվանդներ ընդգրկող հետազոտության մեջ, 14 հիվանդների մոտ ՆԳՃ եղել է >20 մմ սս փորոքային կաթետրի տեղադրման պահին[184]: Սակայն այս հիվանդների մոտ ՆԳՃ հաճախակի բարձրացումներ չեն գրանցվել հետագա մոնիտորինգի ընթացքում: Կան վկայություններ, որ առկա է ներգանգային ճնշման գրադիենտ, այնպես, որ ներգանգային ճնշումը կարող է ավելի բարձր լինել հեմատոմայի շուրջ[186]: Քանի որ բարձր ՆԳՃ-ի պատճառը ներփորոքային արյունազեղումն է կամ հեմատոմայի և հարակից այտուցի ծավալային ազդեցությունը, փոքր հեմատոմայով կամ քիչ քանակությամբ ներփորոքային արյունազեղումով հիվանդները չեն պահանջում ՆԳՃ իջեցնող բուժում: Բարձր ներգանգային ճնշումն ավելի հաճախ է երիտասարդների և սուպրատենտորիալ ՄՆԱ ունեցող հիվանդների մոտ[185]: Հիդրոցեֆալիան ՄՆԱ-ի դեպքում կապված է վատ ելքերի հետ [187-189]: 902 հիվանդներ ընդգրկող ռանդոմիզացված հետազոտությամբ, 377 ունեցել են ներփորոքային արյունազեղում, որոնցից 208 ունեցել են հիդրոցեֆալիա (բոլոր հիվանդների 23 %)[190]:

Ներգանգային ճնշումը չափվում է պարենխիմատոզ կամ ներփորոքային գործիքների միջոցով: Օպտիկամանրաթելային տեխնիկան կարող է օգտագործվել երկու եղանակի դեպքում էլ: Կողմնային փորոքներ տեղադրված կաթետրը թույլ է տալիս դրենավորել ուղեղ-ողնուղեղային հեղուկ, որը նպաստում է ՆԳՃ իջեցմանը: Գլխուղեղի պարենխիմա տեղադրված գործիքը թույլ է տալիս միայն չափել ներգանգային ճնշումը: ՆԳՃ

մոնիտորների հետ կապված հիմնական բարդությունը ինֆեկցիան է և ներգանգային արյունազեղումը: Ինֆեկցիայի ռիսկն ավելի բարձր է ներփորոքային կաթետրների դեպքում, չնայած այս տվյալները վերցված են ոչ թե ՍՆԱ-ով հիվանդների հետազոտություններից, այլ սուբարախնոիդալ արյունազեղում կամ գանգուղեղային վնասվածք ունեցող հիվանդներից: 1997 հիվանդներ ընդգրկող հետազոտության մեջ, 108 պարնիսիմատոզ տվիչների դեպքում, ինֆեկցիան կազմել է 2,9 %, իսկ ներգանգային արյունազեղումը 2,1% (15,3 %-ն ունեցել են կոագուլոպաթիա)[191]: Ներփորոքային թրոմբոլիզ ստացած 22 հիվանդից 2-ի (9%) մոտ առաջացել է վենտրիկուլիտ, սակայն այս հիվանդները ստացել են բազմաթիվ ինտրաթեկալ ներարկումներ, ինչը տեսականորեն կարող է բարձրացնել ինֆեկցիայի ռիսկը[184]: Ներգանգային մոնիտորինգ սկսելուց առաջ պարտադիր պետք է ստուգվի մակարդեյիությունը: Նախկինում հակաազրեգանտներ ստացած հիվանդների մոտ արդարացված է թրոմբոցիտար զանգվածի ներարկումը, իսկ վարֆարին ստացած հիվանդների մոտ պետք է շտկել կոագուլոպաթիան: Որոշումը, օգտագործել պարենիսիմատոզ թե փորոքային տվիչ, կախված է նրանից, թե անհրաժեշտ է բուժել նաև հիդրոցեֆալիան, թե՞ միայն չափել ներգանգային ճնշումը: Քանի որ սահմանափակ քանակությամբ հետազոտությունների տվյալներ գոյություն ունեն ՍՆԱ-ով հիվանդների մոտ ՆԳՃ մոնիտորինգի և բուժման վերաբերյալ, ՆԳՃ վարման սկզբունքները վերցված են գանգուղեղային վնասվածքների վարման ուղեցույցներից, որտեղ խորհուրդ է տրվում ՆԳՃ մոնիտոր տեղադրել ԳԿՍ 3-10 միավոր ունեցող հիվանդներին և պահել ներգանգային ճնշումը < 20 մմ սս, պերֆուզիոն ճնշումը 50-70 մմ սս, կախված գլխուղեղի աուտոռեգուլյացիայի վիճակից [192-194]: Բարձր ՆԳՃ և ցածր պերֆուզիոն ճնշումը կապված են բարձր մահացության հետ [184, 195,196]: Գլխուղեղի պերֆուզիոն ճնշումը < 70-80 մմ սս դեպքում գլխուղեղում առկա է հիպոքսիա: Այսպիսով, ՆԳՃ մոնիտորինգ և հետագա բուժում ցուցված է ԳԿՍ ≤8 միավոր, տրանստենտորիալ դիսլոկացիայի կլինիկական նշաններ և նշանակալի ներփորոքային արյունազեղում կամ հիդրոցեֆալիա ունեցող հիվանդների մոտ: Բարձր ներգանգային ճնշման բուժման եղանակները նույնպես վերցված են գանգուղեղային վնասվածքների ուղեցույցներից: Հիմնական սկզբունքները ներառում են՝ մահճակալի գլխատակի բարձրացում 30°, թեթև սեդացիա, պարանոցային երակների սեղմվածության կանխում[197]: Մանիտոլը կամ հիպերտոնիկ լուծույթը կարող են կիրառվել ներգանգային

ճնշման սուր բարձրացումները բուժելու համար: Հիպերտոնիկ լուծույթն ավելի արդյունավետ է[198]: Հիդրոցեֆալիայով կամ մեկուսացված փորոքներով հիվանդների մոտ պետք է կիրառվի փորոքային դրենավորում: Հեմատոմային հեռացումը և դեկոմպրեսիոն կրանիէկտոմիան բարձր ՆԳՃ բուժման տարբերակներ են: Այլ մոտեցումներ են բարբիտուրատային կոման և չափավոր հիպոթերմիան: Կորտիկոստերոիդներից պետք է խուսափել, քանի որ դրանք անարդյունավետ ունենալու են և բարձրացնում են բարդությունների տոկոսը[199]: Փոքրածավալ հետազոտություններ կատարել են գլխուղեղի հյուսվածքային թթվածնի և միկրոդիալիզի մոնիտորինգ, սակայն քիչ քանակությամբ հիբանդերի և տվյալների սղության պատճառով դրանք ընդգրկված չեն խորհրդատվությունների մեջ[195,200,201]:

### **Ներգանգային ճնշման մոնիտորինգը և բուժումը**

- 1) **Արտաքին փորոքային դրենավորումը խելամիտ է ՍՆԱ-ով, հատկապես գիտակցական խանգարումով հիվանդների մոտ հիդրոցեֆալիայի բուժման համար (դաս IIa, մակարդակ B):**
- 2) **ԳԿՍ <8 միավոր, տրաստենտորիալ մխրճման կլինիկական նշաններ, նշանակալի նեփրոքային արյունազեղում կամ հիդրոցեֆալիա ունեցող հիվանդների մոտ կարելի է իրականացնել ներգանգային ճնշման մոնիտորինգ և բուժում: Գլխուղեղի պերֆուզիոն ճնշումը պետք է պահվի 50-70 մմ սս միջակայքում՝ կախված աուտոռեգուլյացիայի վիճակից (դաս IIb, մակարդակ C):**
- 3) **ՍՆԱ-ով հիվանդների մոտ բարձր ներգանգային բարձր ճնշման բուժման նպատակով կորտիկոստերոիդներ չպետք է կիրառվեն (դաս III, մակարդակ B):**

### **Ներփորոքային արյունազեղում**

Ներփորոքային արյունազեղումը(ՆՓԱ) հանդիպում է ՍՆԱ-ով հիվանդների 45%-մոտ և վատ ելքի անկախ ռիսկի գործոն է [199,202,203]: 13 հետազոտությունների վերլուծությունը ցույց է տվել, որ ՍՆԱ-ի հետ զուգակցված ՆՓԱ-ն բարձրացնում է մահացությունը 20%-ից առանց ՆՓԱ մինչև 51%ՆՓԱ-ով[204]: ՆՓԱ-ն կարող է լինել առաջնային կամ երկրորդային՝ ՍՆԱ-ի տարածման արդյունքում: ՆՓԱ-երի

մեծամասնությունը երկրորդային է և կապված է բազալ հանգույցների կամ թալամուսի հիպերտենզիոն արյունազեղման տարածմամբ [202,205]: Չնայած փորոքային կաթետրի տեղադրումը տեսականորեն կարող է օգնել արյան և ուղեղ-ողնուղեղային հեղուկի դրենավորմանը, սակայն փորոքային դրենավորումը միայնակ կարող է լինել անօգուտ, քանի որ դժվար է պահպանել դրա անցողունակությունը և ներփորոքայի արյունը դատարկվում է շատ դանդաղ[188]: Ուստի վերջերս մեծացել է փորոքային կաթետրի միջոցով թրոմբոլիտիկ նյութերի ներմուծման նկատմամբ հետաքրքրությունը:

Հետազոտությունները հաղորդել են, որ ֆիբրինոլիտիկ նյութերի, մասնավորապես՝ ուռոկինազայի, ստրեպտոկինազայի և հյուսվածքային թրոմբոլիտիկոզի ռեկոմբինանտ ակտիվատորի ներփորոքային ներմուծումը կարող է նվազեցնել մահացությունը և հաշմանդամությունը՝ արագացնելով արյան քայքայումը և դատարկումը[206-214]: ՆՓԱ-ով 42 հիվանդներ ընդգրկող հետազոտության մեջ, ովքեր բուժվել են ներփորոքային ուռոկինազայով, մահ հանդիպել է 21 դեպքում(50%), վենտրիկուլիտ 11 (26%)[206]: Մեկ այլ հետազոտություն համեմատել է ներփորոքային հյուսվածքային թրոմբոլիտիկոզի ռեկոմբինանտ ակտիվատոր(ՀԹՌԱ) ստացած ՆՓԱ-ով 48 հիվանդներ միայն արտաքին փորոքային դրենաժ ունեցող 49 հիվանդի հետ [207]: Մահացությունն իջել է 30 %-ից 10% ՀԹՌԱ խմբում, և 2 հիվանդի մոտ այս նույն խմբում ախտորոշվել է վենտրիկուլիտ: Փոքր պրոսպեկտիվ հետազոտությամբ, ՄՆԱ<30 մմ <sup>3</sup> և ՆՓԱ ունեցող 16 հիվանդներ ռանդոմիզացվել են փորոքային կաթետր ունեցողների և փորոքային կաթետր և ուռոկինազա ստացածների [213]: ՆՓԱ-ի մաքրումն ավելի արագ էր ուռոկինազայով: Մահացությունը 6 ամիս անց 14 % էր ուռոկինազայով և 44 % միայն փորոքային կաթետրով, և չկար որևէ էական տարբերություն խմբերի միջև վենտրիկուլիտի կամ շունտավորման առումով: 4 ռանդոմիզացված և 8 դիտորդական հետազոտություններով համեմատվել են ՄՆԱ և ՆՓԱ ունեցող հիվանդներ 2 խմբով՝ մեկը՝ փորոքային կաթետրով հիվանդների (n=149), մյուսը՝ (n=167) փորոքային կաթետրով և ներփորոքային ֆիբրինոլիզով: Մահացությունը 47 % ընդդեմ 23%-ի: Տարբերությունները հիմնականում եղել են ուռոկինազայի խմբում [209]: Չի եղել որևէ տարբերություն բարդությունների կամ շունտավորման անհրաժեշտության միջև: Հետազոտություններում ՀԹՌԱ դոզան տատանվել է 1-4 մգ ամեն 8-12 ժամը մեկ [184, 215-218]: Ներփորոքային ֆիբրինոլիզի ամենամեծ հետազոտություն CLEAR-IVH հետազոտությունն է [184, 217,218]: Այն ընդգրկել

է ՆՓԱ ունեցող 100 հիվանդներ(22 պլացերո, 78 ՀԹՌԱ), ում մոտ ՆՓԱ պայմանավորված է եղել <30 մմ<sup>3</sup> ՄՆԱ-ով [184, 217-219]: ՀԹՌԱ խմբում վենտրիկուլիտ դիտվել է 3 հիվանդի մոտ(4%),պլացերոյի խմբում՝ 2-ի մոտ(9%): ՀԹՌԱ խմբում հիվանդներն ունեցել են ավելի ցածր ներգանգային ճնշում, քիչ կաթետրի խցանում, որը պահանջել է փոխարինում, ավելի քիչ կաթետրի պահելու տևողություն: ՀԹՌԱ ստացած հիվանդներից 9 (12%)-ի մոտ դիտվել է սիմպտոմատիկ կրկնակի արյունազեղում և մեկ հիվանդի մոտ պլացերոյի խմբում (5%): Մշտական շունտավորում պահանջվել է ՀԹՌԱ խմբում 6 %-ի, իսկ պլացերոյի խմբում՝ 14%-ի մոտ: 30 օրվա միջին մոդիֆիկացված Ռենկինի սանդղակի միավորը եղել է 5 երկու խմբերում էլ, մահացությունը 19 %: Ներկայումս կան ՆՓԱ-ի համար այլընտրանքային եղանակներ, ինչպիսիք են հեմատոմայի էնդոսկոպիկ դատարկումը և վենտրիկուլոստոմիան [220-223]: ՆՓԱ-ով 48 հիվանդների հետազոտության մեջ, որտեղ կիրառվել է էնդոսկոպիկ եղանակը, 17 տոկոսն են պահանջել մշտական շունտավորում համեմատած միայն փորոքային կաթետր ունեցող հիվանդների մոտ գրանցված 48 տոկոսի հետ: Ելքն ըստ Ռենկինի սանդղակի եղել է միևնույնը[221,223]:

- 1) **Չնայած ՄՆԱ-ի դեպքում ռեկոմբինանտ հյուսվածքային թրոմբոպլաստինի ակտիվատորի ներփորոքային ներմուծումը ունի ցածր բարդությունների հաճախականություն, այս բուժման արդյունավետությունն ու անվտանգությունը անորոշ են (դաս IIb, մակարդակ B):**
- 2) **Ներփորոքային արյունազեղման էնդոսկոպիկ բուժման արդունավետությունն անորոշ է (դաս IIb, մակարդակ B):**

### **ՄՆԱ-ի վիրահատական բուժումը**

Սպոնտան ՄՆԱ-ով հիվանդների մոտ վիրահատական բուժման դերը մնում է հակասական: Տեսականորեն հեմատոմայի հեռացումը կանխում է դիլսոկացիայի առաջացումը, նվազեցնում է ՆԳՃ-ն, և արյան քայքայման արգասիքների տոքսիկ ազդեցությունը շրջակա հյուսվածքների վրա: Վիրահատական և կոնսերվատիվ բուժումների արդյունքները համեմատող ռանդոմիզացված հետազոտությունները չեն ցույց տվել

վիրահատական միջամտության որևէ հստակ առավելություն: Ավարտվել են երկու պրոսպեկտիվ ռանդոմիզացված հետազոտություններ և 3 մետա-անալիզներ, որոնք համենատել են վիրահատական և կոնսերվատիվ բուժումները ՍՆԱ-ի դեպքում[226-229]: Մի քանի այլ հետազոտություններ էլ համեմատել են նվազ ինվազիվ միջամտությունները վիրահատության հետ: Ավելին, մի քանի վերջին ռետրոսպեկտիվ հետազոտություններ շեշտել են կրանիէկտոմիայի դերը ՍՆԱ-ով հիվանդների մոտ ՆԳՃ կարգավորման մեջ[230-234]: Ներգանգային արյունազեղումները, որոնք առաջացել են վնասվածքի կամ անկրիզմաների ու արտերիովենոզ մալֆորմացիաների պատճառով, չեն ներառված այս ուղեցույցներում, քանի որ այս հիվանդները չեն ընդգրկվել հետազոտությունների մեջ:

### **Կրանոտոմիան սուպրատենտորիալ արյունազեղումների համար**

STICH հետազոտությունը կատարվեց, որի նպատակն էր պարզել, արդյոք վաղ վիրահատությունը նվազեցնում է մահացությունը և բարելավում ելքերը համեմատած կոնսերվատիվ վարման հետ, երբ բուժող նյարդավիրաբույժը անորոշություն է գտնում նախընտրելի բուժման մեջ [235]: Այս հետազոտության մեջ, 1033 հիվանդներ 27 երկրի 83 կենտրոններից ռանդոմիզացվել են վաղ վիրահատության (< 24 ժամ) և սկզբնական կոնսերվատիվ բուժման միջև: Բարենպաստ ելքը ըստ Գլազգոյի ընդլայնված 8 նիշանոց սանդղակի 6 ամիս անց եղել է հիմնական նպատակը: Վիրաբուժական խմբում 26 %-ն ունեցել են բարենպաստ ելք, կոնսերվատիվ խմբում՝ 24%-ը: Խմբերի միջև չի եղել որևէ նշանակալի տարբերություն մահացության և ֆունկցիոնալ ելքերի առումով: Ի սկզբանե կոնսերվատիվ բուժման ընդունված հիվանդների 26 %-ը հետագայում ենթարկվել է վիրահատության: Ենթախմբային վերլուծությունը ենթադրեց, որ լոբար և կեղևից 1 սմ խորության հեմատոմաները կարող են օգուտ քաղել վիրահատությունից: Կոմատոզ վիճակում ընդունված հիվանդներն ունեցել են վատ ելքեր: Այս տվյալների հիման վրա STICH II հետազոտությունը կատարվեց [226,228]: Այս հետազոտության հիմնական հարցն էր, արդյո՞ք մակերեսային, կեղևից 1 սմ խորության վրա տեղակայված, 10-100  $\text{cm}^3$  ծավալով հեմատոմաներ ունեցող գիտակից հիվանդների մոտ վիրահատությունը կարող է ունենալ լավ արդյունք: 27 երկրներից 78 կենտրոններ են մասնակցել: Հետազոտությունը ռանդոմիզացրել է վաղ (< 12 ժամ) վիրահատված և դեղորայքային բուժում ստացած և միայն դեղորայքային բուժում ստացած հիվանդներին: Վաղ

վիրահատական խմբում 41 % հիվանդներ են ունեցել լավ ելք, համեմատած դեղորայքային բուժման խմբի 38%-ի հետ: Այս տարբերությունը վիճակագրորեն ոչ հավաստի է եղել: Այսպիսով, հեմատոմայի վաղ դատարկումը բարենպաստ չի եղել 2 մեծ ռանդոմիզացված հետազոտություններով:

### **Կրանիոտոմիան հետին գանգափոսի արյունազեղումների համար**

Հետին գանգափոսի փոքր ծավալների պատճառով ուղեղիկային արյունազեղումներից հետո կարող է լինել արագ վատացում՝ պայմանավորված օբստրուկցիոն հիդրոցեֆալիայով կամ ուղեղբնի սեղմումով: Մի քանի ոչ ռանդոմիզացված հետազոտություններ ենթադրել են, որ  $> 3$  սմ ուղեղիկային հեմատոմայով հիվանդները կամ հիվանդները, ում մոտ ուղեղիկային արյունազեղումը բերում է հիդրոցեֆալիայի կամ ուղեղաբնի սեղմման, ունեն լավ ելքեր դեկոմպրեսիայից հետո [237,239]: Փորձել կարգավորել ՆԳՃ այլ եղանակներով քան հեմատոմայի հեռացումն է, մասնավորապես փորոքային դրենավորման միջոցով աննպատակահարմար է, խորհուրդ չի տրվում, կարող է լինել վնասակար, հատկապես սեղմված ցիստերներով հիվանդների մոտ[239]: Ի տարբերություն ուղեղիկային հեմատոմաների հեռացմանը, ուղեղաբնի հեմատոմաների հեռացումը վնասակար է

### **Կրանիէկտոմիան ՄՆԱ-ի դեպքում**

ՄՆԱ-ով հիվանդների մոտ դեկոմպրեսիոն կրանիէկտոմիայի դերը վատ է ուսումնասիրված: Ըստ STICH հետազոտության տվյալների, մի շարք հեղինակներ առաջարկել են, որ դեկոմպրեսիոն կրանիէկտոմիայի շնորհիվն ընտրված հիվանդներ կարող են ունենալ լավ ելք, հատկապես բարձր ՆԳՃ և ծավալային ազդեցություն ունեցող հիվանդները[232-234, 240]: Այս հետազոտությունների մեջ այդ հիվանդըրը եղել են կոմատոզ, ունեցել են միջին կառույցների նշանակալի շեղումներ, մեծ հեմատոմաներ և չկառավարվող բարձր ՆԳՃ: Մեկ հետազոտություն ուսումնասիրել է 12 սուպրատենտորիալ ՄՆԱ-վ հիվանդների մոտ դեկոմպրեսիոն կրանիէկտոմիան: Հեմատոմայի միջին ծավալը եղել է 61,3 սմ<sup>3</sup>: Միջին նախավիրահատական ԳԿՍ եղել է 8: Այս խմբում 3 հիվանդներ մահացել են ի տարբերություն ստուգիչ խմբի 9 մահի:

### **ՄՆԱ-ի քիչ ինվազիվ դատարկում**



Վերջերս մի քանի հետազոտություններ համեմատել են քիչ ինվազիվ ասպիրացիան ստանդարտ կրանիոտոմիայի հետ և գտել են ավելի լավ արդյունքներքիչ ինվազիվ մեթոդների դեպքում[227,231, 241-244]: Ռանդոմիզացված հետազոտությունը համեմատել է 465 հիվանդների մոտ բազալ հանգույցների արյունազեղման ասեղային ասպիրացիան դեղորայքային բուժման հետ: Չնայած չկար էական տարբերություն մահացության մեջ, 3 ամսվա նյարդաբանական ելքըն ավելի լավ է եղել ասպիրացիայի խմբում [227]:

### **Վիրահատության ժամկետների որոշումը**

Վիրահատության ժամկետների հարցը մնում է անորոշ: Ռանդոմիզացված պրոսպեկտիվ ուսմանսիրել է վիրահատության անցկացման լայն ինտերվալ, ախտանիշների առաջացման պահից 4-96 ժամ[226,235,245,246]: STICH II հետազոտությամբ լավ արդյունքներ ստացվում են ախտանիշների ի հայտ գալուց 21 ժամերի ընթացքում վիրահատվածների մոտ[226]: 8 հետազոտությունների մետասանալիզը ցույց է տվել լավ ելքեր 8 ժամերի ընթացքում վիրահատությունների դեպքում [247]: Գերվաղ (<4 ժամ ) վիրահատությունների դեպքում բարձր է կրկնակի արյունազեղման ռիսկը

- 1) **Ուղեղիկային արյունակույտով հիվանդերը, ովքեր ունեն նյարդաբանական վատացում, ուղեղաբնի ճնշում, օկյուզիոն հիդրոցեֆալիա, պետք է ենթարկվեն արյունազեղման հեռացման հնարավորինս շուտ (դաս I, մակարդակ B): Որպես սկզբնական բուժում խորհուրդ չի տրվում արտաքին փորոքային դրենավորում վիրահատական հեռացման փոխարեն (դաս III, մակարդակ C):**
- 2) **ՄՆԱ-ով հիվանդների մեծամասնության մոտ վիրահատական բուժման արդյունավետությունը չի հաստատվել (դաս IIb, մակարդակ A):**  
**Բացառությունները հաջորդիվ կներկայացվեն:**
- 3) **Արյունակույտի վաղ հեռացումն ավելի արդյունավետ չէ կլինիկորեն վատացման դեպքում արյունակույտի հեռացման համեմատ (դաս IIb, մակարդակ A):**
- 4) **Կլինիկորեն վատացող հիվանդի մոտ արյունակույտի հեռացումը դիտարկվում է որպես կյանքը փրկող միջամտություն (դաս IIb, մակարդակ C):**

- 5) Սուպրատենտորիալ արյունազեղումով հիվանդների մոտ, ովքեր կոմայի մեջ են, ունեն մեծ արյունակույտ, միջին կառույցների նշանակալի տեղաշարժ, դեղորայքի նկատմամբ կայուն ներգանգային ճնշման բարձրացում, դեկոմպրեսիոն տրեպանացիան կարող է իջեցնել մահացությունը (դաս IIb, մակարդակ C):
- 6) Մինիմալ ինվազիվ եղանակներով արյան մակարդուկի հեռացուման արդյունավետությունը հստակ չէ (դաս IIb, մակարդակ B):

### **Կրկնակի արյունազեղման կանխարգելումը**

ՄՆԱ-ով հիվանդները գտնվում են կրկնակի արյունազեղման կամ մեկ այլ անոթային խնդրի առաջացման բարձր ռիսկի տակ[267]: ՄՆԱ –ի կրկնման տարեկան կուտակված ռիսկը 1-5 % է[267-269]: Չնայած ՄՆԱ –ի կրկնման ռիսկը ամենաբարձրն է առաջին տարվա ընթացքում, ռիսկը պահպանվում է ամեն տարի, հատկապես լրբար արյունազեղումների դեպքում[269,270]:

### **Ռիսկի գործոնները**

Հիպերտենզիան, մեծ տարիքը, հեմատոմայի լրբար տեղակայումը ՄՆԱ-ի կրկնման հիմնական ռիսկի գործոններն են[269,271]: Բարձր ՁՃ բարձրացնում է և՛ խորը, և՛ մակերեսային արյունազեղումների կրկնման ռիսկը[271]: ՏԱրեցների մոտ ՄՆԱ-ի ռիսկը բարձր է ամիլոիդ անգիոպաթիայի ավելի բարձր տարածվածության և հակաթրոմբոտիկ դեղորայքի ավելի շատ ընդունմամբ: Ամիլոիդ անգիոպաթիան ՄՆԱ-ի կրկնման հայտնի ռիսկի գործոն է, հատկապես լրբար տեղակայումների դեպքում[271]: E ապոլիպոպրոտեինի ε2 և ε4 ալելներ կրողները, նախկինում արյունազեղում տարածները, և gradient echo ՄՌՏ հետազոտությամբ միկրոարյունահոսություններ ունեցած հիվանդները ՄՆԱ-ի կրկնման ամենաբարձր ռիսկի տակ են[272,275]: Սպիտակամորթների մոտ սկզբնական արյունազեղումնավելի հաճախ լրբար է, մինչդեռ խորանիստ արյունազեղումներն ավելի բնարաշ են ասիացիներին: [269,276]: Իշեմիկ կաթվածի անամնեզը, հատկապես լակունար տիպի, նույնպես բարձրացնում է ՄՆԱ-ի կրկնման հավանականությունը [277,278]:

## **ԶՃ վարումը**

Ռսիկի գործոններից միայն հիպերտենզիան և հակամակարդիչներն են փոփոխվող: PROGRESS հետազոտության մեջ, պերինդոպրիլով (օրական 4 մգ) և ինդապամիդով նրութումը նվազեցնում է զարկերակային ճնշումը, սիստոլիկը 12 մմ սս, դիաստոլիկը 5 մմ սս –ով, իջեցնում է առաջին և կրկնակի ՍՆԱ-ի ռիսկը, ինչպես նաև այլ անոթային միջադեպերի ռիսկը[267,273,279]: ԶՃ իջեցման օպտիմալ ժամկետները ՍՆԱ-ի կնկնման կանխման նպատակով անհայտ է: INTERACT 2 հետազոտությամբ, սիստոլիկ ԶՃ կտրուկ իջեցումը մինչև 140 անվտանգ է եղել, ինչը ցույց է տալիս, որ հակահիպերտենզիոն բուժումը պետք է սկսվի հնարավորինս շուտ [280-291]:

## **Հակաթրոմբոտիկ դեղորայքի վարումը**

Տարեց ազգաբնակչության մոտ հակամակարդիչների և հակաագրեգանտների հաճախ կիրառումը բարձրացնում է ՍՆԱ-ի առաջացման և կրկնման ռիսկը [292]: Տվյալները շատ աղքատ են ՍՆԱ-ից հետո վարֆարինի շարունակման հետ կապված մահացության և ՍՆԱ-ի կրկնման ռիսկի վերաբերյալ: Կանադական կաթվածի ռեգիստրում ընդգրկված 284 ՍՆԱ-ով հիվանդների մոտմահացությունը եղել ցածր այն հիվանդների մոտ, ովքեր վերսկսել են վարֆարինը հիվանդանոցում. 30 օրվա ընթացքում 31,9% ընդդեմ 54%-ի, և մեկ տարվա ընթացքում 48 % ընդդեմ 61%-ի, և արյունահոսության դեպքերն ավելի հաճախ չեն եղել[293]:

ՍՆԱ-ից հետո հակամակարդիչների շարունակման հստակ ժամկետները անորոշ են և չկան համապատասխան ռանդոմիզացված հետազոտություններ: ՍՆԱ –ով 2869 հիվանդների ռետրոսպեկտիվ հետազոտությամբ, որոնցից 234 եղել են վարֆարինով պայմանավորված, վարֆարինի ընդունման վերսկսման դեպքում կրկնակի ՍՆԱ-ի առաջացման հարաբերական ռիսկը 5,6 է միջինում 69 շաբաթվա դինամիկ հսկողության արդյունքում[294-296]: Հակամակարդիչներով պայմանավորված ՍՆԱ-երի դեպքում մի քանի հետազոտություններով դիտվել են քիչ սրտային էմբոլիզմի դեպքեր, երբ հակամակարդիչն չի վերսկսվել կամ կրկնակի արյունազեղման նույնպես քիչ դեպքեր, երբ վերսկսվել է վարֆարինի կիրառումը[297-300]:

Մետա-անալիզը ենթադրում է, որ ասպիրինի կիրառումը չափավոր բարձրացնում է ՄՆԱ-ի հանդիպման հաճախականությունը և մահացությունը, բայց ՄՆԱ-ի ռիսկը ցածր է, եթե հաշվի առնենք կանխված սրտամկանի ինֆարկտի կամ իշեմիկ կաթվածի բացարձակ թվերը[305-307]:

Հակասական տվյալներ կան ստատիստիկ կիրառման վերաբերյալ ՄՆԱ-ի դեպքում[308-312]: 91588 ստատին ստացած հիվանդներ ընդգրկող 31 ռանդոմիզացված հետազոտություններով, չի հայտնաբերվել որևէ կամ ստատինի կիրառման և ՄՆԱ-ի առաջացման միջև, բոլոր կաթվածները և դրանցով պայմանավորված մահացությունն իջել է ստատինի կիրառման պարագայում[310]:

- 1) **Հետևյալ գործոնները բարձրացնում են կրկնակի արյունազեղման ռիսկը (դաս IIa, մակարդակ B)**
  - **Լոբար տեղակայում**
  - **Մեծ տարիք**
  - **Gradient echo ՄՌՏ-ով միկոարյունազեղումների առկայությունը և քանակը**
  - **Շարունակվող հակամակարդիչ բուժումը**
- 2) **Զարկերակային ճնշումը պետք է հսկվի ՄՆԱ-ով բոլոր հիվանդների մոտ (դաս IIb, մակարդակ B): ԶՃ կարգավորման միջոցառումները պետք է սկսվեն ՄՆԱ-ի սկսից ի վեր (դաս I, մակարդակ A): Զարկերակային ճնշման երկարաժամկետ թիրախը սիստոլիկ ԶՃ <130 մմ սս և դիաստոլիկ ճնշումը 80 մմ սս է (դաս IIa, մակարդակ B):**
- 3) **Կենսակեպի փոփոխությունները, ներառյալ ծխելու, թմրանյութերի և ալկոհոլի չարաշահման դադարեցումը, օբստրուկտիվ քնի ապնոէ բուժումը, հավանաբար օգտակար են (դաս IIa, մակարդակ B):**
- 4) **Նախասրտերի ոչ փականային շողացման դեպքում վարՖարինի երկարատև օգտագործումը խորհուրդ չի տրվում վարՖարին-ասոցացված լոբար ՄՆԱ-ի դեպքում, քանի որ կրկնակի արյունազեղման ռիսկը բարձր է (դաս IIa, մակարդակ B):**

- 5) **Ցանկացած ոչ լոբար ՄՆԱ-ից հետո հակակոագույանտային կամ հակաագրեգանտային մոնոթերապիան կարող է կիրառվել, հատկապես երբ կան դրանց խիստ ցուցումներ (դաս IIb, մակարդակ B):**
- 6) **Օրալ հակակոագույանտներով բուժման շարունակման օպտիմալ ժամկետները հակակոագույանտ-ասոցացված ՄՆԱ-ից հետո անորոշ են: Օրալ հակակոագույանտների խուսափումը 4 շաբաթով առանց մեխանիկական սրտի փականով հիվանդների մոտ կարող է նվազեցնել ՄՆԱ-ի կրկնման ռիսկը (դաս IIb, մակարդակ B): Ցուցումների առկայության դեպքում ասպիրինով մոնոթերապիան կարող է վերսկսվել ՄՆԱ-ի սկզբից մի քանի օր հետո, չնայած օպտիմալ ժամկետները հստակեցված չեն (դաս IIa, մակարդակ B):**
- 7) **Առկա են անբավարար տվյալներ՝ սահմանափակելու համար սատինների կիրառությունը ՄՆԱ տարած հիվանդների մոտ (դաս IIb, մակարդակ C):**

#### **Վերականգնողական բուժումը**

Կան բազմաթիվ տվյալներ, որ ՄՆԱ-ով հիվանդներն ավելի արագ են վերականգնվում քան իշեմիկ կաթվածով հիվանդները[314-317]: Սովորաբար, վերականգնումն ամենաարագն է սկզբնական շաբաթների ընթացքում, սակայն այն շարունակվում է մի քանի ամիս[28,316]: Ապրողների մոտավորապես կեսը մնում են կախյալ ամենօրյա գործունեության ընթացքում: Այնուամենայնիվ, հիվանդների վերականգնման տեմպերը և աստիճանը տարբերվում են, և չկա որևէ օրենք, թե երբ է վերականգնումն ավարտվում: Գիտակցությունը, տրամադրությունը մոտիվացիան բոլորն էլ ազդում են վերականգնման վրա:

- 1) **Հաշվի առնելով ՄՆԱ-ից հետո հաշմանդամության բարձր հաճախականությունը, բոլոր հիվանդները պետք է ստանան բազմակողմանի վերականգնողական բուժում (դաս I, մակարդակ A):**
- 2) **Վերականգնողական բուժումը պետք է սկսել հնարավորինս շուտ ստացիոնար պայմաններում և շարունակել դուրսգրումից հետո՝ նպատակ ունենալով արագացնել հիվանդի վերադարձը հասարակություն (դաս IIa, մակարդակ B):**

## **Ներդրման հնարավորություններ և աուդիտի ցուցանիշներ**

Հայաստանի բժշկական ծառայություններ մատուցող հաստատություններում ՄՆԱ-ի կլինիկական ուղեցույցի ներդրումը պետք է կրի համակարգված և ամփոփ բնույթ: Ցանկացած օղակի թերագնահատումը կամ ծածկույթից դուրս մնալը՝ լինի դա շտապ օգնության ծառայություն, ընդունարան, վիրասրահ թե ԻԹԲ, վտանգում է ամբողջ գործընթացը և բուժման վերջնական ելքերը: Բոլոր ներգրավված օղակների համար հարկավոր է մշակել համապատասխան գործելակարգեր, որոնք կլինեն համահունչ ինչպես արդի ուղեցույցային խրոհիրդներին այնպես էլ տեղային կադրային և տեխնիկական հնարավորություններին: Աշխատանքային խմբի անդամների կարծիքով ներդրման հնարավոր խոչընդոտներից են.

- **Շտապ օգնության ծառայության ՄՆԱ-ի վերաբերվող գործելակարգերի բացակայությունը/պակասը**
- **Բուժհաստատությունների անհամաչափ կադրային և տեխնիկական հագեցվածությունը**

Առաջարկվող աուդիտի ցուցանիշներն են՝

- **ՄՆԱ ենթադրյալ ախտորոշումով պացիենտների վաղ շրջանի ճառագայթաբանական հետազոտման ներհիվանդանոցային ընթացակարգի առկայությունը**
- **Պացիենտների քանակը, որոնց շրջանում հաջողվել է ապահովել հեմոդինամիկայի թիրախային ցուցանիշները**
- **Ուղեղիկային արյունակույտով պացիենտների քանակը, ում շրջանում առկա է նյարդաբանական վատթարացում, ուղեղաբնի ճնշում և/կամ օկյուզիոն հիդրոցեֆալիա, ովքեր ենթարկվել են վիրահատության առաջիկա 24 ժամերի ընթացքում**
- **ՄՆԱ-ով պացիենտների քանակը, որոնց շրջանում թրոմբականխարգելումը մեկնարկել է 24-72 ժամերի ընթացքում**
- **ՄՆԱ-ով ԻԹԲ-ի պացիենտների քանակը, որոնց շրջանում վերականգնողական թերապիան մեկնարկել է 24-48 ժամերի ընթացքում**

## **Օգտագործված գրականության ցանկ**

1. Zahuranec DB, Gonzales NR, Brown DL, Lisabeth LD, Longwell PJ, Eden SV, Smith MA, Garcia NM, Hoff JT, Morgenstern LB. Presentation of intracerebral haemorrhage in a community. *J Neurol Neurosurg Psychiatry*. 2006;77:340–344. doi: 10.1136/jnnp.2005.077164.
2. Morgenstern LB, Hemphill JC 3rd, Anderson C, Becker K, Broderick JP, Connolly ES Jr, Greenberg SM, Huang JN, MacDonald RL, Messé SR, Mitchell PH, Selim M, Tamargo RJ; on behalf of the American Heart Association Stroke Council and Council on Cardiovascular Nursing. Guidelines for the management of spontaneous intracerebral hemorrhage: a guideline for healthcare professionals from the American Heart Association/American Stroke Association. *Stroke*. 2010;41:2108–2129. doi: 10.1161/STR.0b013e3181ec611b.
3. Flaherty ML, Woo D, Haverbusch M, Sekar P, Khoury J, Sauerbeck L, Moomaw CJ, Schneider A, Kissela B, Kleindorfer D, Broderick JP. Racial variations in location and risk of intracerebral hemorrhage. *Stroke*. 2005;36:934–937. doi: 10.1161/01.STR.0000160756.72109.95.
4. Sacco S, Marini C, Toni D, Olivieri L, Carolei A. Incidence and 10-year survival of intracerebral hemorrhage in a population-based registry. *Stroke*. 2009;40:394–399. doi: 10.1161/STROKEAHA.108.523209.
5. Roach ES, Golomb MR, Adams R, Biller J, Daniels S, Deveber G, Ferriero D, Jones BV, Kirkham FJ, Scott RM, Smith ER. Management of stroke in infants and children: a scientific statement from a Special Writing Group of the American Heart Association Stroke Council

and the Council on Cardiovascular Disease in the Young [published correction appears in *Stroke*. 2009;40:e8–e10]. *Stroke*. 2008;39:2644–2691. doi: 10.1161/STROKEAHA.108.189696.

6. Moon JS, Janjua N, Ahmed S, Kirmani JF, Harris-Lane P, Jacob M, Ezzeddine MA, Qureshi AI. Prehospital neurologic deterioration in patients with intracerebral hemorrhage. *Crit Care Med*. 2008;36:172–175. doi: 10.1097/01.CCM.0000297876.62464.6B.

7. Brott T, Broderick J, Kothari R, Barsan W, Tomsick T, Sauerbeck L, Spilker J, Duldner J, Khoury J. Early hemorrhage growth in patients with intracerebral hemorrhage. *Stroke*. 1997;28:1–5.

8. Fan JS, Huang HH, Chen YC, Yen DH, Kao WF, Huang MS, Huang CI, Lee CH. Emergency department neurologic deterioration in patients with spontaneous intracerebral hemorrhage: incidence, predictors, and prognostic significance. *Acad Emerg Med*. 2012;19:133–138. doi: 10.1111/j.1553-2712.2011.01285.x.

9. Jauch EC, Saver JL, Adams HP Jr, Bruno A, Connors JJ, Demaerschalk BM, Khatri P, McMullan PW Jr, Qureshi AI, Rosenfield K, Scott PA, Summers DR, Wang DZ, Wintermark M, Yonas H; on behalf of the American Heart Association Stroke Council; Council on Cardiovascular Nursing; Council on Peripheral Vascular Disease; Council on Clinical Cardiology. Guidelines for the early management of patients with acute ischemic stroke: a guideline for healthcare professionals from the American Heart Association/American Stroke Association. *Stroke*. 2013;44:870–947. doi: 10.1161/STR.0b013e318284056a.

10. Acker JE 3rd, Pancioli AM, Crocco TJ, Eckstein MK, Jauch EC, Larrabee H, Meltzer NM, Mergendahl WC, Munn JW, Prentiss SM, Sand C, Saver JL, Eigel B, Gilpin BR, Schoeberl M, Solis P, Bailey JR, Horton KB, Stranne SK. Implementation strategies for emergency medical services within stroke systems of care: a policy statement from the American Heart Association/American Stroke Association Expert Panel on Emergency Medical Services Systems and the Stroke Council. *Stroke*. 2007;38:3097–3115. doi: 10.1161/STROKEAHA.107.186094.



11. Abdullah AR, Smith EE, Biddinger PD, Kalenderian D, Schwamm LH. Advance hospital notification by EMS in acute stroke is associated with shorter door-to-computed tomography time and increased likelihood of administration of tissue-plasminogen activator. *Prehosp Emerg Care*. 2008;12:426–431. doi: 10.1080/10903120802290828.
12. Walter S, Kostopoulos P, Haass A, Helwig S, Keller I, Licina T, Schlechtriemen T, Roth C, Papanagiotou P, Zimmer A, Viera J, Vierra J, Körner H, Schmidt K, Romann MS, Alexandrou M, Yilmaz U, Grunwald I, Kubulus D, Lesmeister M, Ziegeler S, Pattar A, Golinski M, Liu Y, Volk T, Bertsch T, Reith W, Fassbender K. Bringing the hospital to the patient: first treatment of stroke patients at the emergency site. *PLoS One*. 2010;5:e13758. doi: 10.1371/journal.pone.0013758.
13. Weber JE, Ebinger M, Rozanski M, Waldschmidt C, Wendt M, Winter B, Kellner P, Baumann A, Fiebach JB, Villringer K, Kaczmarek S, Endres M, Audebert HJ; STEMO-Consortium. Prehospital thrombolysis in acute stroke: results of the PHANTOM-S pilot study. *Neurology*. 2013;80:163–168. doi: 10.1212/WNL.0b013e31827b90e5.
14. Schwamm LH, Audebert HJ, Amarenco P, Chumbler NR, Frankel MR, George MG, Gorelick PB, Horton KB, Kaste M, Lackland DT, Levine SR, Meyer BC, Meyers PM, Patterson V, Stranne SK, White CJ; on behalf of the American Heart Association Stroke Council; Council on Epidemiology and Prevention; Interdisciplinary Council on Peripheral Vascular Disease; Council on Cardiovascular Radiology and Intervention. Recommendations for the implementation of telemedicine within stroke systems of care: a policy statement from the American Heart Association. *Stroke*. 2009;40:2635–2660. doi: 10.1161/STROKEAHA.109.192361.
15. Angileri FF, Cardali S, Conti A, Raffa G, Tomasello F. Telemedicine-assisted treatment of patients with intracerebral hemorrhage. *Neurosurg Focus*. 2012;32:E6. doi: 10.3171/2012.1.FOCUS11356.
16. Lee SH, Kim BJ, Bae HJ, Lee JS, Lee J, Park BJ, Yoon BW. Effects of glucose level on early and long-term mortality after intracerebral haemorrhage: the Acute Brain Bleeding Analysis Study. *Diabetologia*. 2010;53:429–434. doi: 10.1007/s00125-009-1617-z.

17. Béjot Y, Aboa-Eboulé C, Hervieu M, Jacquin A, Osseby GV, Rouaud O, Giroud M. The deleterious effect of admission hyperglycemia on survival and functional outcome in patients with intracerebral hemorrhage. *Stroke*. 2012;43:243–245. doi: 10.1161/STROKEAHA.111.632950.
18. Flibotte JJ, Hagan N, O'Donnell J, Greenberg SM, Rosand J. Warfarin, hematoma expansion, and outcome of intracerebral hemorrhage. *Neurology*. 2004;63:1059–1064.
19. Flaherty ML, Haverbusch M, Sekar P, Kissela BM, Kleindorfer D, Moomaw CJ, Broderick JP, Woo D. Location and outcome of anticoagulant-associated intracerebral hemorrhage. *Neurocrit Care*. 2006;5:197– 201. doi: 10.1385/NCC:5:3:197.
20. Hays A, Diringner MN. Elevated troponin levels are associated with higher mortality following intracerebral hemorrhage. *Neurology*. 2006;66:1330–1334. doi: 10.1212/01.wnl.0000210523.22944.9b.
21. Sandhu R, Aronow WS, Rajdev A, Sukhija R, Amin H, D'aquila K, Sangha A. Relation of cardiac troponin I levels with in-hospital mortality in patients with ischemic stroke, intracerebral hemorrhage, and subarachnoid hemorrhage. *Am J Cardiol*. 2008;102:632–634. doi: 10.1016/j. amjcard.2008.04.036.
22. Hasegawa K, Fix ML, Wendell L, Schwab K, Ay H, Smith EE, Greenberg SM, Rosand J, Goldstein JN, Brown DF. Ischemic-appearing electrocardiographic changes predict myocardial injury in patients with intracerebral hemorrhage. *Am J Emerg Med*. 2012;30:545–552. doi: 10.1016/j. ajem.2011.02.007.
23. Junttila E, Vaara M, Koskenkari J, Ohtonen P, Karttunen A, Raatikainen P, Ala-Kokko T. Repolarization abnormalities in patients with subarachnoid and intracerebral hemorrhage: predisposing factors and association with outcome. *Anesth Analg*. 2013;116:190–197. doi: 10.1213/ ANE.0b013e318270034a.
24. Fonarow GC, Pan W, Saver JL, Smith EE, Reeves MJ, Broderick JP, Kleindorfer DO, Sacco RL, Olson DM, Hernandez AF, Peterson ED, Schwamm LH. Comparison of 30-day mortality models for profiling hospital performance in acute ischemic stroke with vs without adjustment for stroke severity. *JAMA*. 2012;308:257–264. doi: 10.1001/ jama.2012.7870.

25. Smith EE, Shobha N, Dai D, Olson DM, Reeves MJ, Saver JL, Hernandez AF, Peterson ED, Fonarow GC, Schwamm LH. A risk score for in-hospital death in patients admitted with ischemic or hemorrhagic stroke. *J Am Heart Assoc.* 2013;2:e005207. doi: 10.1161/JAHA.112.005207.
26. Bernstein RA, Hemphill JC. Critical care of acute ischemic stroke. *Curr Neurol Neurosci Rep.* 2001;1:587–592.
27. Bruce SS, Appelboom G, Piazza M, Hwang BY, Kellner C, Carpenter AM, Bagiella E, Mayer S, Connolly ES. A comparative evaluation of existing grading scales in intracerebral hemorrhage. *Neurocrit Care.* 2011;15:498–505. doi: 10.1007/s12028-011-9518-7.
28. Hemphill JC 3rd, Farrant M, Neill TA Jr. Prospective validation of the ICH Score for 12-month functional outcome. *Neurology.* 2009;73:1088–1094. doi: 10.1212/WNL.0b013e3181b8b332.
29. Ji R, Shen H, Pan Y, Wang P, Liu G, Wang Y, Li H, Zhao X, Wang Y; China National Stroke Registry (CNSR) Investigators. A novel risk score to predict 1-year functional outcome after intracerebral hemorrhage and comparison with existing scores. *Crit Care.* 2013;17:R275. doi: 10.1186/cc13130.
30. Rost NS, Smith EE, Chang Y, Snider RW, Chanderraj R, Schwab K, FitzMaurice E, Wendell L, Goldstein JN, Greenberg SM, Rosand J. Prediction of functional outcome in patients with primary intracerebral hemorrhage: the FUNC score. *Stroke.* 2008;39:2304–2309. doi: 10.1161/STROKEAHA.107.512202.
31. Wei JW, Heeley EL, Wang JG, Huang Y, Wong LK, Li Z, Heritier S, Arima H, Anderson CS; ChinaQUEST Investigators. Comparison of recovery patterns and prognostic indicators for ischemic and hemorrhagic stroke in China: the ChinaQUEST (Quality Evaluation of Stroke Care and Treatment) Registry study. *Stroke.* 2010;41:1877–1883. doi: 10.1161/STROKEAHA.110.586909.
32. Weimar C, Benemann J, Diener HC; German Stroke Study Collaboration. Development and validation of the Essen Intracerebral Haemorrhage Score. *J Neurol Neurosurg Psychiatry.* 2006;77:601–605. doi: 10.1136/jnnp.2005.081117.

33. Clarke JL, Johnston SC, Farrant M, Bernstein R, Tong D, Hemphill JC 3rd. External validation of the ICH score. *Neurocrit Care*. 2004;1:53–60. doi: 10.1385/NCC:1:1:53.
34. Garrett JS, Zarghouni M, Layton KF, Graybeal D, Daoud YA. Validation of clinical prediction scores in patients with primary intracerebral hemorrhage. *Neurocrit Care*. 2013;19:329–335. doi: 10.1007/s12028-013-9926-y.
35. van Asch CJ, Velthuis BK, Greving JP, van Laar PJ, Rinkel GJ, Algra A, Klijn CJ. External validation of the secondary intracerebral hemorrhage score in The Netherlands. *Stroke*. 2013;44:2904–2906. doi: 10.1161/STROKEAHA.113.002386.
36. Rincon F, Mayer SA, Rivolta J, Stillman J, Boden-Albala B, Elkind MS, Marshall R, Chong JY. Impact of delayed transfer of critically ill stroke patients from the Emergency Department to the Neuro-ICU. *Neurocrit Care*. 2010;13:75–81. doi: 10.1007/s12028-010-9347-0.
37. Elmer J, Pallin DJ, Liu S, Pearson C, Chang Y, Camargo CA Jr, Greenberg SM, Rosand J, Goldstein JN. Prolonged emergency department length of stay is not associated with worse outcomes in patients with intracerebral hemorrhage. *Neurocrit Care*. 2012;17:334–342. doi: 10.1007/s12028-011-9629-1.
38. Cooper D, Jauch E, Flaherty ML. Critical pathways for the management of stroke and intracerebral hemorrhage: a survey of US hospitals. *Crit Pathw Cardiol*. 2007;6:18–23. doi: 10.1097/01.hpc.0000256146.81644.59.
39. Andrews CM, Jauch EC, Hemphill JC 3rd, Smith WS, Weingart SD. Emergency neurological life support: intracerebral hemorrhage. *Neurocrit Care*. 2012;17(suppl 1):S37–S46. doi: 10.1007/s12028-012-9757-2.
40. Goldstein LB, Simel DL. Is this patient having a stroke? *JAMA*. 2005;293:2391–2402. doi: 10.1001/jama.293.19.2391.
41. Fiebich JB, Schellinger PD, Gass A, Kucinski T, Siebler M, Villringer A, Olkers P, Hirsch JG, Heiland S, Wilde P, Jansen O, Röther J, Hacke W, Sartor K; Kompetenznetzwerk Schlaganfall B5. Stroke magnetic resonance imaging is accurate in hyperacute

- intracerebral hemorrhage: a multicenter study on the validity of stroke imaging. *Stroke*. 2004;35:502–506. doi: 10.1161/01.STR.0000114203.75678.88.
42. Chalela JA, Kidwell CS, Nentwich LM, Luby M, Butman JA, Demchuk AM, Hill MD, Patronas N, Latour L, Warach S. Magnetic resonance imaging and computed tomography in emergency assessment of patients with suspected acute stroke: a prospective comparison. *Lancet*. 2007;369:293–298. doi: 10.1016/S0140-6736(07)60151-2.
43. Singer OC, Sitzer M, du Mesnil de Rochemont R, Neumann-Haefelin T. Practical limitations of acute stroke MRI due to patient-related problems. *Neurology*. 2004;62:1848–1849.
44. Leira R, Dávalos A, Silva Y, Gil-Peralta A, Tejada J, Garcia M, Castillo J; Stroke Project, Cerebrovascular Diseases Group of the Spanish Neurological Society. Early neurologic deterioration in intracerebral hemorrhage: predictors and associated factors. *Neurology*. 2004;63:461–467.
45. Davis SM, Broderick J, Hennerici M, Brun NC, Diringer MN, Mayer SA, Begtrup K, Steiner T; Recombinant Activated Factor VII Intracerebral Hemorrhage Trial Investigators. Hematoma growth is a determinant of mortality and poor outcome after intracerebral hemorrhage. *Neurology*. 2006;66:1175–1181. doi: 10.1212/01.wnl.0000208408.98482.99.
46. Cucchiara B, Messe S, Sansing L, Kasner S, Lyden P; CHANT Investigators. Hematoma growth in oral anticoagulant related intracerebral hemorrhage. *Stroke*. 2008;39:2993–2996. doi: 10.1161/STROKEAHA.108.520668.
47. Delcourt C, Huang Y, Arima H, Chalmers J, Davis SM, Heeley EL, Wang J, Parsons MW, Liu G, Anderson CS; INTERACT1 Investigators. Hematoma growth and outcomes in intracerebral hemorrhage: the INTERACT1 study. *Neurology*. 2012;79:314–319. doi: 10.1212/WNL.0b013e318260cbba.
48. Kazui S, Minematsu K, Yamamoto H, Sawada T, Yamaguchi T. Predisposing factors to enlargement of spontaneous intracerebral hematoma. *Stroke*. 1997;28:2370–2375. doi: 10.1161/01.STR.28.12.2370.

49. Fujii Y, Takeuchi S, Sasaki O, Minakawa T, Tanaka R. Multivariate analysis of predictors of hematoma enlargement in spontaneous intracerebral hemorrhage. *Stroke*. 1998;29:1160–1166. doi: 10.1161/01.STR.29.6.1160.
50. Goldstein JN, Fazen LE, Snider R, Schwab K, Greenberg SM, Smith EE, Lev MH, Rosand J. Contrast extravasation on CT angiography predicts hematoma expansion in intracerebral hemorrhage. *Neurology*. 2007;68:889–894. doi: 10.1212/01.wnl.0000257087.22852.21.
51. Wada R, Aviv RI, Fox AJ, Sahlas DJ, Gladstone DJ, Tomlinson G, Symons SP. CT angiography “spot sign” predicts hematoma expansion in acute intracerebral hemorrhage. *Stroke*. 2007;38:1257–1262. doi: 10.1161/01.STR.0000259633.59404.f3.
52. Demchuk AM, Dowlathshahi D, Rodriguez-Luna D, Molina CA, Blas YS, Dzialowski I, Kobayashi A, Boulanger JM, Lum C, Gubitz G, Padma V, Roy J, Kase CS, Kosior J, Bhatia R, Tymchuk S, Subramaniam S, Gladstone DJ, Hill MD, Aviv RI; PREDICT/Sunnybrook ICH CTA Study Group. Prediction of haematoma growth and outcome in patients with intracerebral haemorrhage using the CT-angiography spot sign (PREDICT): a prospective observational study [published correction appears in *Lancet Neurol*. 2012;11:483]. *Lancet Neurol*. 2012;11:307–314. doi: 10.1016/S1474-4422(12)70038-8.
53. Brouwers HB, Falcone GJ, McNamara KA, Ayres AM, Oleinik A, Schwab K, Romero JM, Viswanathan A, Greenberg SM, Rosand J, Goldstein JN. CTA spot sign predicts hematoma expansion in patients with delayed presentation after intracerebral hemorrhage. *Neurocrit Care*. 2012;17:421–428. doi: 10.1007/s12028-012-9765-2.
54. Rizos T, Dörner N, Jenetzky E, Sykora M, Mundiyanapurath S, Horstmann S, Veltkamp R, Rohde S, Bendszus M, Steiner T. Spot signs in intracerebral hemorrhage: useful for identifying patients at risk for hematoma enlargement? *Cerebrovasc Dis*. 2013;35:582–589. doi: 10.1159/000348851.
